

ԾԱՆՈԹԱՆԱՔ ՕՆԹԱՐԻՈՅԻ

Արդեօք գիտե՞ք թե կարող էք մասնակցիլ
«Ծանօթանանք Օնթարիոյի» սեմինարին:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք
այցելել: <https://orientationontario.ca/en>

Մեր հետ կապ պահելու համար հաճեցէք
հեռաձայնել երկլեզու գծին **1-855-626-0002** կամ
մեր հետ նամակցիլ **020@costi.org** հասցէին:

Ֆինանսաւորուած է



Orientation to Ontario



ՅԱՄՏԱՏՈՒՈՂՆԵՐՈՒՆ ՕՆԹԱՐԻՈՅԻ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒՈՂՆԵՐՈՒՆ


orientation to
ontario  **l'ontario**
c'est chez moi

ՈՒՂԵՑՈՅՑ ՕՆԹԱՐԻՈՅԻ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒՈՂՆԵՐՈՒՆ




ORIENTATION TO ONTARIO


«Ծանոթանալ Օնտարիոյին» ծրագիրը ֆինանսավորվում է Կանադայի ներգաղթի, փախստականների և քաղաքացիության (IRCC) և Օնտարիոյի կառավարության կողմից: Այս երկլեզու ծրագիրը ստեղծվել է նոր ներգաղթյալներին ներգրավելու համար՝ «Ծանոթանալ Օնտարիոյին» գրքույկի, սեմինարների և անզլերեն (orientationontario.ca/en) և ֆրանսերեն (orientationontario.ca/fr) կայքերի միջոցով:



Սկանավորեք QR կոդը՝ ՕՉՕ վեբինարներին մուտք գործելու համար:



Սկանավորեք QR կոդը՝ ՕՉՕ տեղեկատվական թերթիկներին մուտք գործելու համար:



Սկանավորեք QR կոդը՝ ՕՉՕ աշխատանքային գրքույկին մուտք գործելու համար:



GET IT ON
Google Play



Download on the
App Store



Get it from
Microsoft

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՕՍՔ

COSTI Immigrant Services կազմակերպությունը կը ցանկանայ իր երախտագիտությունը յայտնել հետեւեալ խորհրդակցական կոմիտէներու եւ ծրագիրներու կառավարման անդամ գործակատարութիւններու եւ գործընկերներու, իրենց աջակցութեան եւ դեկլարութեան, որոնց աշխատակցութիւնը հնարաւորութիւն տուաւ այս ծրագրի մշակման: Նաեւ շնորհակալութիւն կը յայտնենք ծառայութիւն-ներկայացնող գործակատարութիւններուն , որ մասնակցեցան նախնական նմոշին (pilot) իրագործման, որոնց նուիրուածութիւնը եւ պարտաւորութիւնը իրականացուցին այս գործը՝ Օնթարիո գաւառին մէջ:

- Association canadienne-française de l’Ontario
Conseil régional des Mille-Îles
- Association des francophones de la région de
York
- Brampton Multicultural Community Centre
- Catholic Centre for Immigrants
- Catholic Crosscultural Services
- CSC du Grand Sudbury
- CSCVanier
- Centre for Immigrant and Community Services
- Centre francophone du GT
- Centre communautaire francophone Windsor-
Essex-Kent
- Collège Boréal
- Conseil Économique et Social d’Ottawa
-Carleton
- HMC Connections
- Immigrant Services Guelph-Wellington
- Kingston Community Health Centres
- London Cross Cultural Learners Centre
- Multicultural Council of Windsor & Essex
County
- Newcomer Centre of Peel
- New Canadians` Centre of Excellence
- North Bay and District Multicultural Centre
- Niagara Folk-Arts Multicultural Centre
- North York Community House
- Peel Multicultural Council
- Punjabi Community Health Services
- Polycultural Immigrant & Community Services
- TNO - The Neighbourhood Organization
- Thunder Bay Multicultural Association
- Upper Canada District School Board
- Vietnamese Association of Toronto
- WoodGreen Community Services
- YMCA Hamilton/Burlington/Brantford
- YMCA of Three Rivers
- YMCA of Simcoe/Muskoka

Ծրագրին տնօրէնութիւնը իր ակնածանքը եւ շնորհակալութիւնը կը յայտնէ Ալպերդ Քասոն-ին գրքոյկին նկարագարդման համար:

Վերջապէս կը փափաքինք շնորհակալութիւն յայտնել ներգաղթողներուն, որոնք որոշած են Օնթարիոն իրենց տունը սեպել, առանց իրենց օժանդակութեան, հնարաւոր պիտի չ’ըլլար այս ծրագիրը ամբողջացնել: Բարի եկաք!

ԳՐՔՈՅԿԻՆ ՄԱՍԻՆ

Բարի Գալուստ Օնթարիո (Ontario), Գանատա: Գանատան հպարտ եւ բազմամշակութային հանրութիւն մըն է, ջերմօրէն կը դիմաւորէ նոր եկողները աշխարհի բոլոր կողմերէն: Օնթարիոյի բնակչութիւնը 16 միլիոնէ¹ աւելի է, որմէ մաս կը կազմեն աւելի քան 250 երկիրներէ եկող մարդիկ եւ անոնք կը խօսին 200-է աւելի լեզուներ:² Նոր երկրի մը մէջ հաստատուիլը հաճելի է: «*Ծանօթանանք Օնթարիոյ*»-ի գրքոյկը ձեզ պիտի առաջնորդէ:

ԻՆՉ ՊԵՏԻ ԳՏՆԷՔ ԱՅՍ ԳՐՔՈՅԿԻՆ ՄԷՋ

Այս գրքոյկը կը ներկայացնէ հիմնական տեղեկութիւններ հաստատուելու Օնթարիոյի մէջ: Կը բաղկանայ վեց բաժիններէ: Իւրաքանչիւր բաժին կը պարունակէ քանի մը նիւթեր որ տեղեկութիւն կու տան ամբողջ գաւառին մասին, ներառեալ ուէյ սայթեր և կառավարական գրասենեակներու հեռախօսահամարներ:

Բաժիններուն մեծամասնութիւնը հաստատուելու ծրագրերով օժտուած են եւ անոնք կ'ամփոփեն ձեր հիմնական խնդիրները: Նաեւ կը գտնէք որոշ հարցումներ, «Մտածելու Կէտեր» վերնագրով, այս հարցումները ձեզ կ'օգնեն մտածելու ձեր ընտրութիւններուն մասին ձեր հաստատման ընթացքին:

Լրացուցիչ տեղեկութիւններու կարիք պիտի ունենաք որպէսզի կարենաք մշակել ձեր անձնական հաստատման ծրագիրը: Այս գրքոյկը կը ներկայացնէ կարգ մը գաղափարներ թէ ինչպէս կրնաք գտնել տեղեկութիւնները ինթըրնէթէն եւ կ'ապահովէ որոշ օգտակար միջոցներ:

Կարող էք նաեւ գտնել այս գրքոյկը առցանց (online) անգլերէնով՝ (orientationontario.ca/en) կամ Ֆրանսերէնով՝ (etablissement.org/o2o), նաեւ քանի մը ուրիշ լեզուներով, ըլլալ առցանց կամ տպուած:

Ծանօթանանք Օնթարիոյի Գրքոյկը ձեր քարտէսն ու կողմնացոյցն է: Կարելի է գայն օգտագործել որոշելու համար ուր պէտք է երթաք եւ ինչպէս այնտեղ հասնիք:

ՀԱՍՏԱՏՈՒԻՆ ԾՐԱԳՐԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Որպէսզի կարենաք իրագործել ձեր անձնական հաստատման ծրագիրը կը գտնէք ամէն մէկ նիւթի համեմատ հաստատուիլ ծրագրելու միջոց մը իւրաքանչիւր բաժնի վերջաւորութեան:

- Այս միջոցը կարող է ձեզ օգնել գտնելու տեղեկութեան աղբիւրներ եւ կը հիմաւ ժամանակացոյցեր ձեր աւելի մօտ նպատակներուն համար:
- Այս ծրագրային միջոցը կարելի է նաեւ գտնել առցանց՝ (online):- orientationontario.ca/en

ԳԱՆԱՏԱՅԻ ՄԷՋ ԱՊՐԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ

Immigration, Refugees and Citizenship Canada կազմակերպութիւնը գտնեղած է առցանց (online) միջոց մը, որը կարելի է նաեւ օգտագործել իրագործելու ձեր հաստատման ծրագիրը: Այս միջոցը կը գտնուի առցանց՝- canada.ca կամ findlink.at/cic-ictvac

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ԳԱՆԱՏԱՆՈՒՂԵՑՈՅՑԸ:- ԻՆՉ ՊԵՏՔ Է ԳԻՏՆԱԼ

Այս գրքոյկին մէջ կը գտնէք շատ մը տեղեկութիւններ որ կարելի է նաեւ գտնել **Բարի Գալուստ Գանատայի** ուղեցոյցին մէջ, հրատարակուած Immigration, Refugees and Citizenship Canada կազմակերպութեան կողմէ: Փնտռեցէք այս պատկերը:-



Կարելի է նաեւ կարդալ գայն առցանց՝- canada.ca կամ findlink.at/welcomecan

FINDLINKS

Որպէսզի օգնենք ձեզի հեշտութեամբ տեղեկութիւններ գտնելու մենք նշած ենք բոլոր գլխաւոր ինթըրնէթի հասցէները, եւ FindLink մը որ կը բանայ յատուկ էջ մը ինթըրնէթին մէջ:

¹ Աղբիւր: Ministry of Finance: www.fin.gov.on.ca կամ findlink.at/092

² Աղբիւր: Ontario Immigration: ontarioimmigration.ca



ԻՆԹԵՐՆԵԹ ՄՏՆԵԼ

Օնթարիոյի մէջ, անվճար համակարգիչ/ինթըրնէթ ձեռնտու է գրադարաններու և բնակավայրի գործակալութիւններու մէջ: Կարելի է անվճար (Wi-Fi) գործածել բջիջային հեռաձայններու միջոցաւ բազմազան հանրային տեղեր:

ԲՈՎԱԴԱԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծանոթանալ Գանատայի և Օնթարիոյի

Ծանոթանալ Գանատայի և Օնթարիոյի	4
Կառավարություն	5
Ծանոթացում Օնթարիոյի	6
Բնակավայրի գործակալություններ	10
Գործածական հեռախոսահամարներ և ուեյ սայթեր	11

Ձեր նոր համայնքին մեջ ապրիլ

Առողջապահություն	14
Սպառողի ծառայություններ	17
Բնակարան	18
Համայնքի մասնակցություն	21
Փոխադրում	22
Օրինական իրաւունքներ և ծառայություններ	24
Հաստատման ծրագիր	26

Ուսում եւ վարժեցում

Մանուկի խնամք	30
Տարրական և երկրորդական ուսում	31
Հետ- երկրորդական ուսում	33
Ուսումը շարունակել	34
Լեզուի վարժեցում	35
Հաստատման ծրագիր	36

Աշխատանք և գործ

Աշխատանքի պատրաստել	40
Աշխատանք փնտռել	42
Աշխատատեղի իրաւունքներ	44
Ձեր Սեփական գործը սկսիլ	46
Հաստատման ծրագիր	47

Դրամ եւ անձնական ֆինանսներ

Դրամ և դրամատան գործ	50
Ապառիկ դրամ ստանալ	51
Տուրքեր	52
Օգուտներ և հասարակական օգնություն	53
Հաստատման ծրագիր	54

Մարդիկ և մթնոլորտ

Բովանդակում	56
Անկարողություն ունեցող մարդիկ	57
Ընտանեկան յարաբերություններ	58
Խնայել շրջապատը	59
Հաստատման ծրագիր	60

Յուրաքանչյուր

Ֆետերալկառավարութեան աղբիւրներ	62
Օնթարիո կառավարութեան նախարարություններ	63
Ներածական ցուցակ	64

ԾԱՆՕԹԱՆԱՆՔ ԳԱՆԱՏԱՅԻ ԵՒ ՕՆԹԱՐԻՈՅԻ

Այս բաժինը կը ծանօթացնէ Գանատան և Օնթարիոյի գաւառը, իր աշխարհագրութիւնը, կլիման, բնակչութիւնը, տնտեսութիւնը, լեզուները և կառավարութիւնը: Նաեւ կը գտնէք տեղեկութիւններ հաստատման գործակալութիւններու մասին եւ գործաձական հեռախօսի թիւեր և ուէյ սայթեր:

4

Ծանօթանալը
Գանատայի

5

Կառավարութիւն

6

Ծանօթանալը
Օնթարիոյի

10

Հաստատման
Գործակալութիւններ

11

Գործաձական
Հեռախօսահամարներ եւ
Ուէյ Սայթեր





ԾԱՆՕԹԱՆԱՆՔ ԳԱՆԱՏԱՅԻ

Գանատան աշխարհի երկրորդ ամենամեծ երկիրն է, որու տարածությունն է 10 միլիոն քիլո մեթր քառակուսի (3.9 միլիոն քառակուսի մղոն): Իր մեծ տարածութեան պատճառաւ, Գանատա ունի զանազան տեսարաններ, ինչպէս լեռներ, անտառներ, մարգագետնային արօտավայրեր և Արքթիք Դանտրա (Arctic tundra):

ՔԱՂԱՔՆԵՐ, ԳԱՒԱՌՆԵՐ ԵՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ

Գանատայի մայրաքաղաքը Օթաւա (Ottawa) է, որը կը գտնուի Օնթարիոյի մէջ: Այն Գանատայի չորրորդ ամենամեծ քաղաքն է: Գանատայի ամենամեծ երեք քաղաքներն են Թորոնթօ (Օնթարիո) Toronto (Ontario), Մոնթրէալ (Քվեբեկ) Montreal (Quebec) եւ Վանքուվըր (Բրիտանական Քոլումբիա) Vancouver (British Columbia):

Գանատան ունի տասը գաւառներ և երեք երկրամասեր, իւրաքանչիւրը ունի իր յատուկ մայրաքաղաքը: Գանատայի գլխաւոր տարածաշրջաններն են:-

- Աթլանտեան գաւառները (Atlantic provinces) - (Նիւֆաունտլենտ, Լապրատոր, Բրինս Էտուրըրտ Այլընտ, Նովա Սքոշա եւ Նիւ Պրանզուիք) (Newfoundland and Labrador, Prince Edward Island, Nova Scotia and New Brunswick)
- Կեդրոնական Գանատա (Central Canada) - (Քվեբեկ և Օնթարիո) (Quebec and Ontario)
- Մարգագետնային գաւառները (Prairie provinces) - (Մանիթօպա, Սասքաչուրն և Ալպերդա) (Manitoba, Saskatchewan and Alberta)
- Արեւմտեան Ափը (West Coast) - (Բրիտանական Քոլումբիա) (British Columbia)
- Հիւսիսը (The North) - (Նունաւըր, Նորդ-ուեստ Թերիթորիզը եւ Եուքոն) (Nunavut, the Northwest Territories and Yukon)

findlink.at/LandClimate

ՀԻՄՆԱԳԻՐ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ ԵՒ ՆԵՐԳԱՂԹ

Գանատա ունի երեք հիմնող ժողովուրդներ:-

Բնիկ (Indigenous), Ֆրանսացի և Բրիտանացի: Բնիկ ժողովուրդները ապրած են Գանատայի մէջ երոպացի հետազօտողներու, ռահվիրայներու և գաղթականներու ժամանումէն առաջ: (Indigenous) բառը կը նշէ երեք խումբեր:- Առաջին ազգերը (First Nations) (երբեմն կը կոչուին “հնդիկներ”(Indians)), (Inuit) եւ (Métis): Բնիկ ժողովուրդները կը բնակին Գանատայի մէջ իրենց յատուկ համայնքներուն մէջ ինչպէս նաեւ քաղաքներու մէջ:

Ֆրանսացի ներգաղթողները եկած են 1600-ական եւ 1700-ական տարիներուն, մինչ անգլիախօս ներգաղթողները եկած են Անգլիայէն, Ուելսէն, Սքոթլանտայէն և Իռլանտայէն 17-րդէն մինչեւ 20-րդ դարերուն:

Անցած 200 տարիներու ընթացքին, մարդիկ որ կը պատկանին բազմազան ցեղերու եւ կրօնքներու գաղթած են Գանատա: Այսօր, մօտաւորապէս Գանատացիներուն 20% տոկոսը ծնած է Գանատայէն դուրս, իսկ Թորոնթօյի մէջ աւելի քան 45% տոկոսը:

Գանատայի երկու պետական լեզուները անգլերէնը եւ ֆրանսերէնն են: Օրէնքով, Գանատայի մէջ ֆետերալ կառավարութիւնը պէտք է ծառայութիւնները ապահովէ անգլերէնով եւ ֆրանսերէնով:

findlink.at/LandClimate

ԳԱՆԱՏԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻ ԸՆԼՆԱԼ

Կրնաք պատրաստուիլ Գանատայի Քաղաքացի ըլլալու անմիջապէս երբ կը հասնիք Գանատա: Յաւելեալ տեղեկութիւններ կը գտնեք *Welcome to Canada*-ի մէջ: Կրնաք անվճար կարդալ քաղաքացիութեան քննութեան ուղեցոյցը:- canada.ca կամ findlink.at/cic-study

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գանատա սահմանադրական միապետություն և ֆեդերալ ժողովրդավարություն է, այս կը նշանակէ թէ Գանատայի պետութեան գլխաւոր կառավարիչը թագուհին կամ թագաւորն է, իսկ վարչապետը գլուխն է կառավարութեան: Հիմնական պարտականութիւնները բաժնուած են կառավարական ֆեդերալ, գաւառական եւ տարածքային մակարդակներու միջեւ: Գանատացիները կ'ընտրեն իրենց ֆեդերալ, գաւառական և քաղաքային ներկայացուցիչները ժողովրդային քուէարկութեամբ:

Գանատայի թագուհիին կամ թագաւորին ներկայացուցիչներն են:- Ընդհանուր նահանգապետը (ֆեդերալ) և տասը տեղական նահանգապետեր (գաւառական):

 findlink.at/government

ՖԵԴԵՐԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ֆեդերալ կառավարութիւնը կը հետապնդէ ազգային հարցեր, ինչպէս պետական պաշտպանութիւն, արտաքին գործեր, տարադրամ և դրամատան գործեր, աշխատանքի ապահովագրութիւն, փոստային ծառայութիւններ և քրեական (ոճրային) օրէնք: վարչապետը կը ղեկավարէ ֆեդերալ կառավարութիւնը: Ֆեդերալ կառավարութեան ներկայացուցիչները կը կոչուին **Խորհրդարանի անդամներ** կամ (MPs):

ԳԱՌԱՎԱՐ / ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գաւառական / տարածքային կառավարութիւնները կը հետապնդեն կարգ մը հարցեր, ինչպէս առողջութիւն, ուսում և փոխադրում: Օնթարիոյի մէջ, գաւառական ղեկավարման մարմինը կը կոչուի **Օնթարիո օրէնսդրական մարմին** (Ontario Legislature): Գաւառական կառավարութեան ներկայացուցիչները կը կոչուին **Գաւառական Խորհրդարանի անդամներ** (կամ MPPs):

Քաղաքային կառավարութիւնները (ձեր տեղական համայնքի կամ քաղաքի կառավարութիւնը) կը հետապնդեն տեղական ծառայութիւններ, ինչպէս աղբահաւաքութիւն եւ ժամանցի ծառայութիւններ: Քաղաքային կառավարութեան ներկայացուցիչները կը կոչուին **Խորհրդականներ**:

- Աւելի գիտնալու համար Գանատայի կառավարութեան մասին այցելեցէ՝- canada.gc.ca կամ findlink.at/cgovsystem
- Աւելի գիտնալու համար Օնթարիոյի գաւառական կառավարութեան մասին այցելեցէ՝ ontario.ca կամ findlink.at/govontario
- Աւելի գիտնալու թէ ինչպէս քաղաքային կառավարութիւնները կ'աշխատին Օնթարիոյի մէջ այցելեցէ՝- yourlocalgovernment.com

Մտածելու Կէտեր

Ո՞վ է իմ Խորհրդարանի անդամը (MP) եւ ի՞նչ հարցերով կը զբաղի:

Ո՞վ է իմ Գաւառական Խորհրդարանի անդամը (MPP) եւ ի՞նչ հարցերով կը զբաղի:

Ի՞նչպէս կը կապակցիմ իմ տեղական Խորհրդականիս հետ:





ԾԱՆՕԹԱՆԱՆՔ ՕՆԹԱՐԻՈՅԻ

Գանատա ներգաղթողներուն գրեթե կէսը կ'ընտրեն Օնթարիոն որպէս իրենց նոր բնակարանը:³ Օնթարիո հպարտ է իր բազմամշակութային հանրութեամբ եւ ան բազմազան միջազգային առեւտուրի եւ վաճառականութեան կեդրոն է:

ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Օնթարիո ամենամեծ գաւառն է բնակչութեամբ (13 միլիոնէ աւելի): Օնթարիացիներուն մեծամասնութիւնը կ'ապրի քաղաքային կեդրոններու մէջ, որոնք կը գտնուին գաւառին հարաւային սահմանին մօտ, Գրէյթ Լէյքսի (Great Lakes) կողքին: Ընդհանրապէս գաւառին հիւսիսային տարածքներու գիւղաքաղաքները եւ համայնքները աւելի փոքր են:

Շատ մը Օնթարիոյի քաղաքներու եւ գիւղաքաղաքներու անունները կ'արտայայտեն գաւառին հարուստ Բնիկ (Indigenous) պատմութիւնը եւ ժառանգութիւնը: **Օնթարիո** բառը կու գայ հին (Iroquoian) լեզուի “kanadario” բառէն, որ կը նշանակէ “գեղեցիկ լիճ” կամ “բայլուն ջուր”:

Օնթարիոն տարածքով չորրորդ ամենամեծն

է Գանատայի տասը գաւառներուն եւ երեք երկրամասերուն մէջ, ան գրեթե Ֆրանսայի երկու անգամն է եւ Հնդկաստանի մէկ երրորդը:

Օնթարիոյի մէջ պտոյտ մը ծրագրելու համար, այցելեցէք Օնթարիոյի կառավարութեան պաշտօնական զբոսաշրջութեան ուէպ սայթը: destinationontario.com/en-ca

Վայելեցէք Օնթարիոյի բնական միջավայրերը այցելելով Օնթարիոյի գաւառական զբոսայգի մը: Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէք ontarioparks.ca

³ Աղբիւր: Immigration, Refugees and Citizenship Canada: cic.gc.ca կամ findlink.at/prstats



ԲՆԻՎ «INDIGENOUS» ՄՇԱԿՈՑԹ

“Բնիկ ժողովուրդները” (Indigenous peoples) ընդհանուր անունն է Հիւսիսային Ամերիկայի բուն բնակիչներուն և անոնց շարաիղներուն: Անոնք ապրած են Օնթարիոյի մէջ աւելի քան 7 հազար տարիներ առաջ:

Գանատայի սահմանադրութիւնը կը ճանչնայ բնիկ (Indigenous) ժողովուրդներու երեք խումբեր: (First Nations), (Métis) եւ (Inuit): Ասոնք երեք տարբեր ժողովուրդներ են որոնք ունին իրենց յատուկ պատմութիւնները, լեզուները, մշակութային գործունէութիւնները և հոգեւոր համոզումները: Օնթարիոյի մէջ (First Nations) ժողովուրդներն են:- Algonquian լեզու խօսող Cree, Oji-Cree, Algonquin, Ojibwa, Odawa, Potawatomi եւ Delaware, առաւել Iroquoian լեզու խօսող Վեց Ազգեր (Six Nations) - (Mohawk, Oneida, Onondaga, Cayuga, Seneca եւ Tuscarora): (Métis) ժողովուրդը խառնուրդն է First Nations-ի և եւրոպացի ցեղերուն, որոնք իրենք իրենց կը ներկայացնեն իբր (Métis): Inuit-ները բնիկ (Indigenous) ժողովուրդն են Արքթիք Գանատայի, ներառեալ Nunavut, Northwest Territories, Yukon, Հիւսիսային Քվեբեկ եւ Labrador:

Հունիսի 21-ը Բնիկ ժողովուրդների ազգային օրն է: Ամեն տարի Օնտարիոյի բնակիչները մասնակցում են բնիկ մշակութային միջոցառումների և ծանոթանում են բնիկ ժողովուրդների հարուստ ժառանգությանը Օնտարիոյում և ամբողջ երկրում:

2021 թվականի Կանադայի մարդահամարի համաձայն՝ ավելի քան 1.8 միլիոն մարդ իրենց համարում է բնիկ ժողովուրդ: Կանադայում բնիկ ժողովուրդը կազմում է Կանադայի ընդհանուր բնակչության 5 տոկոսը:

Օնտարիոն ունի բնիկ ժողովուրդների ամենամեծ բնակչությունը: Ներկայումս Օնտարիոյում ապրում են ավելի քան 406,585 Առաջին ազգերի, մետիսների և ինուիտների ցեղեր, որոնք կազմում են Օնտարիոյի ընդհանուր բնակչության 2.9 տոկոսը և Կանադայի բոլոր բնիկ ժողովուրդների 22.5 տոկոսը:

և գիտէրու մէջ: Ոմանք կ'ապրին փոքր հեռու համայնքներու մէջ, ուր միակ հասնելու միջոցը օդային ճամբով է ամբողջ տարին, կամ սառոյցի ճամբաներով ձմրան ընթացքին: Քաղաքային (Indigenous) ժողովուրդներու մեծամասնութիւնը կը գտնուի Դանտըր Պէյ, Սատաքըրի, Սուր Սէյնթ Մերի, Օթաւա և Թորոնթօ (Thunder Bay, Sudbury, Sault Ste. Marie, Ottawa, Toronto):

Յաւելեալ տեղեկութիւններու համար բնիկ (Indigenous) ժողովուրդի մասին այցելեցէ՝ aadnc-aandc.gc.ca եւ ontario.ca/ministry-indigenous-affairs

ԼԵԶՈՒՆԵՐ

Անգլերէնը ամենատարածուած լեզուն է գաւառին մէջ և գործի առաջնակարգ լեզուն է: Ֆրանսերէնը կը գործածուի Օնթարիոյի ֆրանսերէն խօսող համայնքներուն մէջ եւ Օնթարիոյի ամէն դպրոցականները կը սորուին այս լեզուն: Եթէ լաւ գիտէք ֆրանսերէն եւ անգլերէն, պիտի առաւելութիւն ունենաք աշխատանք փնտռելու ատեն:

ՃՀՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Մեպտեմբերի 30-ը և՛ Ճշմարտության և հաշտեցման ազգային օրն է, և՛ Նարնջագույն վերնաշապիկի օրը, որը նվիրված է այն երեխաներին հիշելուն, ովքեր այլևս չեն վերադարձել հանրակացարաններից և մեծարելուն, ինչպես նաև փրկվածներին, նրանց ընտանիքներին և համայնքներին:

Այս ողբերգական պատմության հիշատակը կարևոր է հաշտեցման գործընթացի համար,

հաստատվել է որպես դաշնային պետական տոն:

Բնիկ համայնքների կողմից գլխավորվող Նարնջագույն վերնաշապիկի օրը նպատակ ունի բարձրացնել իրազեկությունը հանրակացարանային դպրոցների սերունդների միջև ազդեցության մասին և խթանել այն գաղափարը,

որ «Յուրաքանչյուր երեխա կարևոր է»: Նարնջագույն վերնաշապիկը խորհրդանշում է բնիկ երեխաների կողմից կրած մշակութային, ազատության և ինքնագնահատականի կորուստները:

Ավելին իմանալու համար այցելեք՝ canada.ca

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ


Օնթարիոն բազմազան տնտեսութիւն ունի: Գաւառին հարաւային մասին մէջ կը գտնէք ֆինանսական ծառայութիւններ, հիւրասիրութեան արդիւնաբերութիւն, արտադրում, կեանքի գիտութիւններ և տեղեկութեան ու հեռահաղորդակցութեան գիտութիւն:

Գաւառին հիւսիսային մասին մէջ տնտեսութիւնը պատմականօրէն իբր հիմք ունի բնական աղբիւրները: Գլխաւոր արդիւնաբերութիւնները կը ներառեն հանքագործութիւն, անտառաբուծութիւն

և հիտրոէլեկտրականութիւն: Յաւելեալ տեղեկութիւններու համար Օնթարիոյի տնտեսութեան մասին այցելեցէ՝ Ministry of Finance: ontario.ca կամ findlink.at/economy

ԿԼԻՄԱՅ

Օնթարիոյի միջին ամսական ջերմաստիճանները (Յելսիուս աստիճաններով)⁴



⁴ Աղբյուր: currentresults.com կամ findlink.at/091

ԳԻՏԵԻՔ ԹԷ

- Toronto International Film Festival (TIFF) տեղի կ'ունենայ ամեն տարի Մեյսոնթեր ամսուն, ան աշխարհի ամենամեծ և հռչակալոր շարժանկարներու մրցանակաբաշխություններն մեկն է:
- Օնթարիո կ'օժանդակէ 20 հանրային համալսարաններու և 24 կիրառական արուեստներու և արուեստագիտական վարժարաններու:
- Օնթարիոյի մեջ աւելի քան հազար հողմակայաններ կան. այս պատճառաւ Գանատան առաջնորդն է քամիի ուժով հոսանքի ստեղծման:
- Algonquin Provincial Park-ը հիմնուած է 1893 տարին. ան Օնթարիոյի առաջին և ամենամեծ զբոսայգին է:

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹՅՈՒՆ ՕՆԹԱՐԻՈՅԻ ՄԱՍԻՆ

Մայրաքաղաք

Թորոնթօ, Գանատայի ամենամեծ քաղաքը, ունի մօտաւորապէս չորս միլիոն բնակչութիւն

Պաշտօնական ծաղիկ



Սպիտակ թրիլիում (White Trillium)

Պաշտօնական ծառ

Արեւելեան սպիտակ սոճի

Պաշտօնական թռչուն

Սուգահաւ





ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՒՆՆԵՐ

Երբ Օնթարիո հասնիք, կրնաք օգնություն ստանալ տեղական հաստատման գործակալությունէ մը: Հաստատման գործակալությունները համայնքի կազմակերպություններ են որ կ'օգնեն նորեկ ժամանողներուն: Ծառայությունները գաղտնի են, անվճար և շատ լեզուներով ձեռնտու:

Հաստատման պաշտօնեան կարող է ձեզ օգնել տեղեկություն տալով համայնքի եւ կառավարական տարբեր ծառայություններու մասին: Կրնաք հարցնել բնակարանի, առողջապահության, լեզուի վարժեցման, գործ գտնելու և շատ մը ուրիշ ձեռնտու ծառայություններու մասին:

Շատ հաստատման գործակալություններ կը ներկայացնեն ծրագիրներ, որ կրնան օգնել ձեզի և ձեր ընտանիքին մաս կազմելու ձեր նոր համայնքին:

Գանատայի և Օնթարիոյի կառավարությունները կ'ապահովեն ֆինանսավորումը այս կազմակերպություններուն, որպէսզի հաստատման ծառայություններ մատուցանեն նոր Օնթարիո եկողներուն:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՏՆԵԼ ՁԵՐ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

- Settlement.org-ի մէջ կը գտնէք link-եր համանքային ծառայություններու, որ կը գտնուին ձեր շրջանին մէջ, նաեւ օգտակար տեղեկություններ տալու ձեր բոլոր հաստատման պէտքերուն մասին: services.settlement.org
- Immigration, Refugees and Citizenship Canada կ'ապահովէ ցանկ մը հաստատման գործակալություններու canada.ca կամ findlink.at/cic-serve
- Ontario Ministry of Labour, Immigration, Skills Development and Training-ը կ'ապահովէ ցանկ մը գործակալություններու որոնք կ'ընծայեն հաստատման ծառայություններ, այցելեցէք ontario.ca
- Կրնաք հեռացայնել 211 տեղական ծառայություններու մասին տեղեկություններու համար:

ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ՀԵՌԱԽՕՍԱՀԱՄԱՐՆԵՐ

9-1-1 – Շտապ օգնություն (9-1-1 – Emergency)

Հեռաձայնեցեք **911** ձեր հեռաձայնով շտապ օգնության պարագայի երբ որ ըլլայ. եթե պետք ունենաք ոստիկանության, հրշեջի կամ շտապ օգնության ինքնաշարժի: Պատասխանող պաշտոնեան պիտի հարցնէ ձեր լման հասցեն, եւ փոստային գոտը. կան 170 լեզուներու թարգմանիչներ:

911-ը միայն շտապ օգնության ծառայությունն է:

2-1-1 – ծառայություններ (2-1-1 – Services)

Հեռաձայնեցեք **211** ձեր հեռաձայնով տեղեկություն ստանալու ձեր շրջանին մէջ համայնքի եւ հանրային ծառայություններու մասին: Այս սպասարկումը կարելի է ունենալ 24 ժամ օրական 365 օր տարին եւ աւելի քան 150 լեզուներով: **211** թիւը անվճար է և բոլորովին գաղտնի: Յաւելեալ տեղեկություններ ստանալու համար այս ծառայության մասին, այցելեցեք www.211ontario.ca

ServiceOntario INFOline


Հեռաձայնեցեք **1-800-267-8097** տեղեկություն ստանալու որեւէ մէկ կառավարական ծառայության մասին և գիտնալու համար ուր կը գտնուի ձեր տեղական ServiceOntario-ի կեդրոնը: Պէտք է ServiceOntario-ի կեդրոն մը դիմել ստանալու ձեր OHIP քարտը, վարորդի արտօնագիրը և ձեր ինքնաշարժի թիւը:

Service Canada INFOline

Հեռաձայնեցեք **1-800-622-6232** տեղեկություն առնելու ներգաղթի, տուրքերու, քաղաքացիութեան, աշխատանքի ապահովագրութեան, ձեր հանրային ապահովագրութեան թիւի կամ ուրեւ մէկ ֆետերալ ծրագրի կամ սպասարկման վերաբերեալ:

Տեղեկատու (Directory Assistance)

Հեռաձայնեցեք **411** գտնելու տունի կամ գործատեղի հեռաձայնի թիւեր: Այս սպասարկման համարը ընդհանրապէս 50 սենդ է հեռախօսագիծ հեռաձայնէ եւ \$1.50 բջիջային հեռաձայնէ:



ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ՈՒԷՊ ՍԱՅԹԵՐ

ontario.ca

Ontario Ministry of Labour, Immigration, Skills Development and Training-պաշտօնական ուեյ սայթ: Կը գտնէք տեղեկություններ նոր եկողներու հաստատման, լեզուի վարժեցման եւ կամրջելու դասընթացքի (bridge training) յայտագիրներու մասին: Կամրջելու դասընթացքի յայտագիրները կը պատրաստեն ձեզ աշխատելու ձեր մասնագիտութեամբ Օնթարիոյի մէջ:

canada.ca

Immigration, Refugees and Citizenship Canada - պաշտօնական ուեյ սայթ: Կը գտնէք link-եր և շարժանկարներ բազմազան հաստատման նիւթերու մասին, ինչպէս “Living in Canada” “Գանատայի մէջ ապրելու” միջոցը, որ կ’օգնէ ձեզ մշակելու ձեր սեփական հաստատման ծրագիրը: Այցելեցեք findlink.at/livingcana

settlement.org

Կը գտնէք բազմազան հաստատման տեղեկություններ, ներառեալ ուր գտնել տեղական հաստատման ծառայություններ:

servicecanada.gc.ca

Ձեզ կը ներկայացնէ Գանատայի կառավարութեան շատ մը ծրագիրներ եւ ծառայություններ: Կրնաք տեղեկություններ գտնել մասնաւորապէս նոր եկողներու համար այցելելով findlink.at/ncservices

serviceontario.ca

Ծանօթացեք Օնթարիոյի ծրագրերու եւ ծառայություններու, ներառեալ աշխատանքի, ուսումի, ուսուցման և ինքնաշարժ քշելու վերաբերեալ:

yellowpages.ca

Կը գտնէք բնակարաններու, գործատեղի և կառավարական հեռախօսահամարներ, նաեւ կրնաք ստանալ տպուած հեռախօսագիրքը (կը կոչուի *phone book*), որը ձեռնտու է անվճար բոլոր բնակարաններուն համար Օնթարիոյի մէջ: Եթէ կարիք ունիք *phone book*-ի, հեռացայնեցեք **1-800-268-5637**:

cicic.ca

Կը ներկայացնէ տեղեկություն եւ ծառայություններ օգնելու համար միջազգային ուսեալ աշխատողներուն իրենց երաշխաւորագրերու համապատասխան ճանաչում ստանալու:

O CANADA

O Canada!
Our home and native land!
True patriot love
in all of us command.

With glowing hearts
we see thee rise,
The True North
strong and free!

From far and wide
O Canada,
we stand on guard for thee.

God keep our land
glorious and free!

O Canada,
we stand on guard for thee.

O Canada,
we stand on guard for thee.



ՁԵՐ ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄԷՋ ԱՊՐԻԼ

Այս բաժինը կը ներկայացնէ ձեզի տեղեկութիւններ օրը-օրին ապրելու մասին Օնթարիոյի մէջ ներառեալ ինչպէս ունենալ առողջապահական խնամք, գտնել բնակարան եւ համայնքի ժամանցի յայտագիրներ, որտեղէն ընել նպարեղէնի գնումներ եւ գործածել զանազան փոխադրումի միջոցներ ձեր շրջանին մէջ, նաեւ գիտնալ ձեր հիմնական իրաւունքներու մասին և ինչպէս ունենալ օրինաւոր ծառայութիւններ: Երբ գտնէք և օգտագործէք այս ծառայութիւնները, ձեր նոր համայնքը արդէն կը դառնայ շուտով ձեր տունը:

14

Առողջապահութիւն

17

Սպառողի
ծառայութիւններ

18

Բնակարան

21

Համայնքի
մասնակցութիւն

22

Փոխադրում

24

Օրինաւոր իրաւունքներ
և ծառայութիւններ

26

Հաստատման ծրագիր





ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Գանատայի մեջ, ֆետերալ, գաւառական եւ տարածքային կառավարութիւնները առողջապահութեան համակարգի սպասարկման մէջ ունին հիմնական դեր: Առողջապահութեան ծառայութիւնները ներկայացնելը գաւառական եւ տարածքային կառավարութիւններուն պարտականութիւնն է: Գանատայի ազգային բժշկական ապահովագրութեան ծրագիրը (կը կոչուի Medicare) կը յատկացնէ բոլոր բնակիչներուն նախաձեռնութեամբ հնարաւորութիւն հիւանդանոցներու եւ բժիշկներու:

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Օնթարիոյի կառավարութիւնը կ'ապահովէ ընդհանուր առողջապահութեան խնամք գաւառի բնակիչներուն, Ontario Health Insurance Plan (OHIP)-ի միջոցաւ: Այս ծրագիրը կը վճարէ հիմնական բժշկական ծառայութիւնները, ինչպէս ընտանիքի բժիշկին այցելութիւններ եւ շտապ բժշկական օգնութիւն: Իբր Գանատայի քաղաքացի կամ մշտաբնակ, այս ծրագրին համար կը վճարէք ձեր եկամուտի տուրքէն:

OHIP-ի մէջ մաս կազմելու համար, պէտք է ստանալ OHIP քարտը (յաճախ կը կոչուի ձեր *health card*-ը) եւ ներկայացնել զայն ամէն անգամ երբ օգտագործէք բժշկական ծառայութիւններ: Քարտը ապացոյց է, որ դուք իրաւունք ունիք առողջութեան ծառայութիւններ ստանալու Օնթարիոյի մէջ:

Կը գտնէք տեղեկութիւններ զանազան ծառայութիւններու մասին որոնք կը վճարէ OHIP-ը այցելելով Ontario Ministry of Health -ի ուեյ սայթը ontario.ca

OHIP +

Ավելի քան 5000 դեղամիջոցներ անվճար են ներառված OHIP+-ի մէջ 24 տարեկան կամ ավելի փոքր անձանց համար, ովքեր չունեն մասնավոր ապահովագրական ծրագիր: Դուք պարտավոր չէք գրանցվել OHIP+ ապահովագրությանը մուտք գործելու համար.

ձեզ անհրաժեշտ է միայն առողջապահական քարտի համարը եւ համապատասխան դեղատոմսը:

OHIP+ ապահովագրությունը կդադարեցվի ձեր 25-ամյակի օրը կամ եթե դուք ներառվեք մասնավոր ապահովագրական ծրագրում:

OHIP+-ի մասին ավելին իմանալու համար այցելեք

OHIP-ը չի վճարէ բոլոր առողջապահութեան կարիքներուն:
Օրինակ ան չի վճարէր առամնաբոյժական ծառայութիւններու կամ դեղագիրներու:

Կարգ մը գործատէրեր կ'ապահովեն առողջութեան նպաստի ծրագրեր, որ կը ծածկեն կարգ մը այս յաւելեալ ծախսերը, այս կախում ունի գործատէրէն: Կրնաք նաեւ գնել անձնական ապահովագրութիւն, ծածկելու առողջապահութեան ծախսերը, որոնք վճարուած չեն OHIP-ի կողմէ:

Եթէ չ'ունիք OHIP-ի նպաստ, կրնաք մտնել համայնքի առողջութեան կեդրոն մը սահմանափակ ծառայութիւններ ստանալու: Կարդացէք տեղեկութիւնները [յաջորդ էջին մէջ](#):

Կարդացէք Օնթարիոյի մէջ առողջապահութեան մասին հետեւեալ ուեյ սայթերուն մէջ:

- ontario.ca կամ findlink.at/ohip-info

ՁԵՐ ՕՆԹԱՐԻՈ ԱՌՈՂՋՈՒԹԵՄԸ ԱՊԱՀԱՆՎԱԳՐՈՒԹԵՄԸ ԾՐԱԳՐԻ ՔԱՐԴ ՄՏԱՆԱԼԸ

Պէտք է դիմէք ձեր OHIP քարդին երբ ունենաք անհրաժեշտ փաստաթուղթերը: Ամենայն դեպս պէտք է սպասէք երեք ամիս Գանատա հասնելէն վերջ գայն ստանալու համար: Այս սպասման ժամանակամիջոցը կը սկսի այդ թուականէն, որ նշուած է ձեր վայրէջքի արձանագրին մէջ (Record of Landing):

Ձեր OHIP քարդին դիմելու համար, այցելեցէք ամենամօտ ServiceOntario կեդրոնը, ձեր հետ բերէք OHIP-ի իրաւունք տուող քաղաքացիութեան կամ ներգաղթի փաստաթուղթը նաեւ երկու ուրիշ անձնաթուղթեր: Ասոնք նշուած են՝ settlement.org կամ findlink.at/hc-docs



Ձեզի մօտ ServiceOntario կեդրոն մը գտնելու համար:-

- Հեռաձայնեցէք ServiceOntario INFOLine **1-800-267-8097** կամ
- Այցելեցէք ServiceOntario ուէպ սայթը serviceontario.ca կամ findlink.at/mto-office

Սպասման ժամանակամիջոցին կրնաք հնարաւորութիւնը ունենալ համայնքի առողջութեան կեդրոն մը դիմելու սահմանափակ ծառայութիւններ ստանալու համար: Այլապէս, կրնաք գնել անձնական բժշկային ապահովագրութիւն: Տեղեկութիւնները կարդացէք էջին կողմը:

ՍՊԱՍՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԻ ԱՉԱՏՈՒՄ

OHIP ապահովագրութեան համար այլևս սպասման ժամկետ չկա: Եթէ դուք համապատասխանում եք պահանջներին, ապա կունենաք անհապաղ առողջապահական ապահովագրական ծրագիր: Պարզեք, թե արդո՞ք համապատասխանում եք պահանջներին:

ՖԵՏԵՐԱԼ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԳԱՐԺԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Ինդերըմ ֆետերալ Հէլթ Բրօկրամ (Interim Federal Health Program) կ'ապահովէ

ժամանակաւոր առողջապահութեան նպաստ, իրաւունք ունեցող գաղթականներուն, ներառեալ անոնք որոնք իրաւունք չ'ունին OHIP-ի մասնակցելու: Ծրագիրը կը ներառէ դեղագրի ծախսը:

Յաւելեալ տեղեկութիւններու համար իրաւասութեան եւ նպաստի տեսակներուն հաճեցէք այցելել cic.gc.ca կամ findlink.at/ifhp:

ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԲԺԻՇԿԸ

Ձեր ընտանիքի բժիշկը կարելորդ դեր կը խաղայ ձեր ընտանիքին առողջութեան և լաւութեան վերաբերեալ: Ան ընդհանրապէս առաջին անձն է որուն հետ կապ կը պահէք եթէ հիւանդանոց կամ բժշկական խորհուրդի կարիք ունենաք, ան կ'ուղղէ ձեզ բժշկական մասնագէտի մը եթէ անհրաժեշտ է: Ամենայն դեպս Օնթարիոյի մէջ կարգ մը տեղեր կրնաք դժուար ըլլալ ընտանիքի բժիշկ գտնելը: Ահաւասիկ կարգ մը ձեւեր սկսելու:-

- Օգտագործեցէք Health Care Connect ծառայութիւնը որ Ontario Ministry of Health-ը եւ Long-Term Care-ը ապահոված են որպէսզի գտնէք ընտանիքի բժիշկներ ձեր շրջանին մէջ: Հեռաձայնեցէք Health Care Connect թեժ գիծը **1-800-445-1822** կամ այցելեցէք ontario.ca ուէպ սայթը կամ findlink.at/hc-connect:
- Գործածեցէք "Doctor Search"-ը, College of Physicians and Surgeons of Ontario-ի ուէպ սայթին մէջ: Այցելեցէք cpso.on.ca:
- Խօսեցէք ձեր հաստատման խորհրդատուին հետ:
- Հարցուցէք ձեր ընտանիքին եւ ընկերներուն յանձնարարութիւններու համար

Telehealth Ontario

Ոչ-շտապ առողջութեան խորհուրդ ստանալու համար հիւանդապահէ մը հետձայնեցէք **1-866-797-0000**, օրական 24 ժամ, շաբաթը 7 օր: Այս ծառայութիւնը ձեռնտու է անգլերէնով և ֆրանսերէնով նաեւ 110 տարբեր լեզուներով: TTY գիծ մը ձեռնտու է հաշմանդամ մարդոց համար **1-866-797-0000**:

Walk-in բժշկական կեդրոններ

Եթէ չ'ունիք ընտանիքի բժիշկ կամ չեք կրնար ժամադրութեան սպասել, այցելեցէք տեղական բուժարան մը (walk-in clinic): Պէտք է ձեր OHIP քարդը ցոյց տաք: Ձեզի մօտ բուժարան մը գտէք Health Care Options-ի մէջ www.ontario.ca ուէպ սայթին կամ findlink.at/hcoptions

Համայնքի առողջութեան կեդրոններ


Համայնքի առողջութեան կեդրոն մը գտնելու եւ յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար այցելեցէք: health.gov.on.ca կամ findlink.at/healthcare

Ատամաբուժութիւն

Գտէք *Find a Dentist* ծառայութիւնը որ Ontario Dental Association-ը կ'ապահովէ, այցելեցէք: youroralhealth.ca կամ findlink.at/013

Անձնական բժշկական ապահովագրութիւն

Տեղեկութեան համար, այցելեցէք Դեղին էջերը (Yellow Pages) առցանց (online):- yellowpages.ca



Մտածելու կետեր

Ինչպե՞ս կը գտնեմ ընտանիքի բժիշկ:

Ինչպե՞ս կը գտնեմ ատաժապոյտ:

Որտե՞ղ կը գտնուի իմ ամենամօտ բժշկական կեդրոնը:

Որտե՞ղ կը գտնուի իմ ամենամօտ համայնքի առողջութեան կեդրոնը:

Ի՞նչ են ծառայութիւնները որոնց OHIP-ը չի ծածկեր:

Որքա՞ն կ'արժեն այդ ծառայութիւնները որոնց OHIP-ը չի ծածկեր:

Իմ գործատեղքս կը ներկայացնէ՝ բժշկական ապահովագրութեան ծրագիր մը որ կը ծածկէ ատաժապոյտական ե/կամ դեղագրի ծախսերը:

Երբ ես Գանատայէն դուրս կը ճամբորդեմ, OHIP կը վճարէ՞ նոյն բժշկական ծախսերը որոնք ծածկուած են Օնթարիոյի մէջ:

ԱՏԱՄՆԱԲՈՑՈՒԹԻՒՆ

OHIP-ը ընդհանրապէս չի վճարեր ատաժապոյտական ծառայութիւնները, թէեւ ան կը վճարէ կարգ մը ատաժապոյտական ծառայութիւններու որոնք պէտք է ստացուին հիւանդանոցի մը մէջ:

Կրնաք կարգ մը ատաժապոյտական ծառայութիւններ ստանալ անվճար, մանուկներուն որոնց տարիքը 17-էն վար է, ձեր տեղական առողջապահութեան բաժինէն: (Healthy Smiles Ontario) Հելդի Սմայլզ Օնթարիո ծրագրին մասին յաւելալ տեղեկութիւններու համար, հեռաձայնեցէք **1-800-268-1153**, կամ այցելեցէք Ontario Ministry of Health եւ Long-Term Care :- ontario.ca կամ findlink.at/smiles-ont

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐԿԱՍՆԵՐ

Եթէ ունիք շտապ, կեանքը վտանգուած բժշկական արկած մը, հեռաձայնեցէք **911** որեւէ մէկ ժամանակ: Կը միացուիք պաշտօնէային հետ որ պիտի դրկէ ձեզի շտապ օգնութեան ինքնաշարժ մը տեղույն վրայ ուր որ կը գտնուիք: Շտապ օգնութեան ինքնաշարժները պատրաստուած են առաջին բուժօգնութեան անձերով որոնք կրնան անմիջապէս բուժում ներկայացնել: Արկածի հեռաձայնի կեդրոնները կրնան թարգմանիչներ ապահովել աւելի քան 170 լեզուներով:

Կրնաք նաեւ երթալ ամենամօտ հիւանդանոցի շտապ օգնութեան սենեակը - սովորաբար բաց են 24 ժամ օրական, 7 օր շաբաթը: Եթէ չ'ունիք OHIP-ի նպաստը, պիտի ստիպուիք վճարել այդ ծառայութիւններուն որ դուք կը ստանաք:

ՊԱՏՈՒԱՍՏՆԵՐ

Օնթարիո ունի պատուաստի (կամ **դիմադրողականութեան**) ծրագիր, նախապահպանելու չափահասները և մանուկները բազմազան հիւանդութիւններէ: Եթէ դուք կամ ձեր մանուկները պատուաստուած էք, բերէք ձեր հետ ձեր պատուաստի փաստաթուղթերը Օնթարիո:

Եթէ դուք կամ ձեր մանուկները չէք ստացած պատուաստներ, դիմեցէք ձեր ընտանիքի բժիշկին կամ համայնքի առողջութեան կեդրոնի մը բժշկական անձնակազմին որ գիտնաք ինչ պատուաստներու պէտք ունիք: Կրնաք ըլլալ պէտք ունենաք ներկայացնել պատուաստի փաստաթուղթը ձեր մանուկին դպրոցին համար:

Աւելի գիտնալու Օնթարիոյի պատուաստի ծրագրին մասին, այցելեցէք Ministry of Health եւ Long-Term Care-ը:- health.gov.on.ca կամ findlink.at/immuneinfo

 findlink.at/CanadaHealthCare



ՄՏԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

OHIP կը ծածկէ մտային առողջապահութեան ծառայութիւնները որ կը ներկայացնեն հոգեբոյժեր: OHIP-ը չի ծածկեր այդ ծառայութիւնները որոնք կը ներկայացնեն հոգեբաններ, հանրային պաշտօնէաներ և ուրիշ խորհրդատուներ, եթէ չէք ներկայացած անոնց կառավարութեան ֆինանսաւորած գործակալութեան մը կողմէ, ինչպէս մտային առողջութեան կազմակերպութիւն, հիւանդանոց կամ համայնքի առողջութեան կեդրոն:

Մտային առողջապահութեան ծառայութիւններու մասին գիտնալու համար Օնթարիոյի մէջ, հեռաձայնեցէք Ontario Mental Health Helpline **1-866-531-2600**, կամ այցելեցէք connexontario.ca ուեպ սայթը:

Գտնելու ձրի թեժ գիծեր հոգեկան հիւանդութիւն ունեցող անձերու, թմրամոլերու կամ բախտախաղի մոլութիւն ունեցողներու համար, այցելեցէք:- ConnexOntario: connexontario.ca

ԲԺՇԿԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹԻՒՆ

Նախքան Գանատա ձեր հասնիլը որպէս մշտաբնակ, դուք հաւանաբար ներկայացաք բժշկական քննութեան որտեղ իմացաք թէ ուրիշ քննութեան կարիք պիտի ունենաք ձեր Գանատա ժամանումէն ետք: Այս կը կոչուի բժշկական հսկողութիւն, վստահ ըլլալու թէ ձեր առողջութիւնը լաւ վիճակի մէջ է:

Եթէ այս է ձեր վիճակը, պէտք է խօսիք ձեր շրջանի առողջապահութեան տնօրէնութեան հետ, 30 օրուայ ընթացքին ձեր Օնթարիո ժամանումէն ետք: Եթէ յուր չ'տաք, կրնաք խնդիրներ ունենալ ձեր ներգաղթի գործողութեան վերաբերեալ: Գտնելու համար ձեր տեղական հանրային առողջութեան բաժնին տեղը, այցելեցէք:- ontario.ca կամ findlink.at/ph-units:

 findlink.at/CanadaHealthCare

ՄՊԱՌՈՂԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Պզտիկ բաներ շատ տարբերությամբ կ'ընեն: Հեռաձայն ունենանալը, ինքընթերցման մոնիթինգը եւ գիտնալ ուրտեղեն գնել նպարեղենը կարեւոր կէտեր են ձեր հաստատման վերաբերեալ:

ՄՊԱՌՈՂԻ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Օնթարիոյի շուկան լեցուն է զանազան գործածական ապրանքներով եւ ծառայութիւններով: Օրէնքները որ կը պաշտպանեն սպառողներու և գործատուներու իրաւունքները միաժամանակ կ'ուղղեն սպառման գործերուն մեծ մասը:

Ֆետերալ, գաւառական և տարածքային կառավարութիւնները միասնաբար տրամադրած են Գանատայի Սպառողի Գրքովը (*Canadian Consumer Handbook*) որպէսզի աւելի գիտակից սպառողներ ըլլաք: Ան կը ներկայացնէ տեղեկութիւններ կարգ մը նիւթերու մասին ինչպէս առցանց (*online*) գնումներ կատարելը, դրամատան գործերը, բնակարանի և տուն նորոգելու մասին: Ontario Ministry of Consumer Services կը սպասարկէ սպառողի պաշտպանութիւնը: Յանդիման մանրամասնութիւններու համար այցելեցէ՛ք: sse.gov.on.ca/mcs/en/pages/default.aspx կամ findlink.at/conrights

ՀԵՌԱՉԱՅՆԻ ԵՒ ԻՆՔՐՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղաքային շրջաններու մէջ, կան շատ ընտրութիւններ հեռաձայնի եւ ինքընթերցման ծառայութիւններու վերաբերեալ: Աւելի քիչ ընտրութիւններ գոյութիւն ունին գիւղական շրջաններու մէջ:

Շատ ընկերութիւններ կ'առաջարկեն **համատեղել**, կամ միացնել, ձեր հեռաձայնի (բջիջային կամ հեռախօս), ինքընթերցման և հեռատեսիլի ծառայութիւնները մէկ զեղչուած խումբի մը մէջ: Ընտանեկան ծրագիրները նաեւ լաւ ձեւ մըն են բջիջային հեռաձայնի ծառայութիւնները համատեղելու եւ դրամ խնայելու համար: Հետաւոր և միջազգային հեռաձայնելու քարտերը ուրիշ ընտրութիւններ են:

Կարդացէ՛ք եւ հասկցէ՛ք բոլոր պայմանագրի մանրամասնութիւնները ստորագրելէ առաջ:

Շատ հանրային գրադարաններ Օնթարիոյի մէջ կը ներկայացնեն անվճար ինքընթերցման ծառայութիւն ձեր գրադարանի քարտով: Նաեւ եթէ ունիք (*wireless laptop*) անլար լափթոփ մը, կրնաք երթալ տեղեր որ կը ներկայացնեն անվճար անլար (*wireless*) մուտքի իրաւունք (նաեւ կը կոչուին *Wi-Fi HotSpots*) ինչպէս սրճարաններ և ճաշարաններ:

ՓՈՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Canada Post-ը ազգային փոստային ծառայութիւն մըն է, ունի մանրածախ խանութներ գիւղաքաղաքներու, քաղաքներու և գիւղական կեդրոններու մէջ: Կրնաք որկել եւ

ստանալ ծրարներ այս տեղերէն:

ՌԵՏԵԼԻԲ ԳՆԵԼ

Նպարեղենի խանութները ունին շատ մը ընտրութիւններ թարմ ուտելիքներու և ուրիշ նպարեղենի արտադրութիւններու: Նաեւ կրնաք գնել ուտելիքներ աւելի փոքր խանութներէ (որ աւելի սուղ կ'ըլլան) կը կոչուին **անկիւնի խանութներ** (*corner stores*), կամ փոքր պտուղի եւ բանջարեղենի խանութներէ, մսավաճառներէ եւ փտուերէ: Շատ մը տարածքներու մէջ կրնաք տեղական արտադրութիւններ գնել ազգարակատերերու շուկաներէ (*farmers' markets*):

ՓՈՔՐԻԿ ԴԻՍԿԱՄԻՆ ԼՈՒԲԵՐ (ԹԵՑԱՎՃԱՐ)

Մարդիկ յաճախ կը մատուցեն փոքր **դրամական նուէր** մը այն անձին որ իրենց կը ծառայէ ճաշարաններու, զինետոներու եւ հիւրանոցներու մէջ ու թաքսիի վարորդներու: Թէյավճարը ստիպողական չէ այլ ձեւ մըն է գնահատելու լաւ ծառայութիւնը:

Թէյավճարը սովորաբար ձեր հաշուին 10 - 15 % տոկոսն է:

findlink.at/ConsumerProtection

Շտապ սնունդի կարիքներ

Եթէ չէք կրնաք ուտելիք գնել, կրնաք տեղական սննդային դրամատունէ ստանալ անվճար ուտելիք: Խօսեցէ՛ք ձեր հաստատման խորհրդատուին կամ **հեռաձայնեցէ՛ք Ontario Association of Food Banks 1-866-220-4022**, այցելեցէ՛ք oafb.ca/search: Գտնելու հաստատման խորհրդատու մը այցելեցէ՛ք settlement.org/index.asp

Գտնատայի
սպառողի գրքովը
consumerhandbook.ca

Գանատա Փոստ
canadapost.ca
1-866-607-6301

Հեռաձայնի եւ ինքընթերցման
ծառայութիւններ
settlement.org կամ
findlink.at/dailylife

Ազգարակատերերու շուկաներ
farmersmarketsontario.com





ԲՆԱԿԱՐԱՆ

Բնակարանը առաջնակարգ հոգ մըն է բոլոր նոր եկողներուն համար, հանգստաւէտ եւ յարմար գինով տեղ մը որ կրնաք կոչել տուն կարելու պայման մըն է հաստատման:

ԱՌԺԱՄԵԱՅ ԲՆԱԿԱՐԱՆ

Երբ հասնիք Գանատա, վարցու կամ ծախու յարկաբաժին մը, համատիրութիւն մը (condo) կամ տուն մը փնտռելու ընթացքին պէտք պիտի ունենաք առժամեայ տեղ մը մտալու: Հանրակացարանը Hostel աժան փոխանորդն է հիւրանոցին (hotel): Հոսդէլները կ'ապահովեն անձնական սենեակներ կամ անկողիններ մեծ սենեակի մը մէջ ուրիշ մարդոց հետ: Նաեւ կ'օգտագործէք նոյն լոգարանը և խոհանոցը: Հոսդէլ կամ հիւրանոց գտնելու համար:-

- Այցելցէք դէղին էջերը: yellowpages.ca
- Փնտռեցէք ինթըրնէդին մէջ այն քաղաքին կամ գիւղաքաղաքին զբօսաշրջութեան (tourism) ուէպ սայթը, ուր պիտի հաստատուիք եւ կարդացէք կացարանի ցանկերը:
- Գնեցէք զբօսաշրջիկի ուղեգիրքը դէպի Գանատա, որ կը պարունակէ հիւրանոցներու և հոսդէլներու ցանկեր:

 findlink.at/HousingInCanada

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՏԵՍԱՎՆԵՐ ՕՆԹԱՐԻՈՑԻ ՄԷՋ

- Վարձու յարկաբաժին - ունի մէկ, երկու կամ երեք ննջարաններ (*bachelor*) ամուրիներու բաժինները ունին մէկ սենեակ որ թէ առօրեայ սենեակ եւ թէ ննջարան է, բոլոր յարկաբաժինները ունին խողհանոց եւ բաղնիք:
- Վարձու սենեակ - մեծ տունները երբեմն բաժանուած կ'ըլլան մի քանի անձնական ննջարաններու որ կը վարձուին անհատներու կողմէ որոնք կ'օգտագործեն նոյն խոհանոցը և բաղնիքը: Երբեմն կը կոչուին (*rooming houses*):
- Համատիրութիւն (condo) - մեծամասնութիւնը բազմահարկ շէնքերու մէջ կը գտնուին, շատ բաժիններով օժտուած: Տանտէրը կը վճարէ ամսավճար նորոգութեան համար:
- Տուն - անջատուած տներ շրջապատուած հողամասով: Կիսա-անջատուած տներ որ կցուած են պատով մը քովի տան հետ մէկ կողմէն: (*townhouses*) կցուած են երկու պատերով երկու կողմերէն:

 findlink.at/HousingInCanada



ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ամենաշատ ընդհանրացած ձեռք բնակարան գտնելու ձևեր համայնքի թերթին գովազդներու բաժնին մէջ փնտռելն է:- findlink.at/newspapers

Նաեւ կրնաք:

- Գալել թաղամասերու մէջ որ կը հաւնիք, եւ փնտռել “Apartment Available - ձեռնտու յարկաբաժին” կամ “For Rent - վարձու” գրութիւններ շէքերու վրայ:
- Հարցնել ընկերներու, ազգականներու եւ գործընկերներու:
- Նայիլ յայտարարութիւններու ցուցատախտակներու վրայ գրադարաններու, նպարեղէնի խանութներու եւ համայնքի կեդրոններու մէջ:
- Այցելել viewit.ca

Աւելի գիտնալու համար վարձու բնակարանի մասին Օնթարիոյի մէջ, այցելեցէք ուէպ սայթերը որ նշում են էջին եզերքը տեղեկութեան սինակին մէջ:

Տունի վարձքը կը տարբերի գաւառին մէջ տեղին համեմատ: Մեծ քաղաքային շրջանները ունին աւելի բարձր բնակարանի վարձքեր քան փոքր քաղաքները կամ գիւղաքաղաքներու շրջանները: Կարող են նաեւ մեծ տարբերութիւն ունենալ մեծ քաղաքներու մէջ, թաղամասերու համեմատ, ինչպէս Թորոնթօն: Գանատացի մասնագէտները կ'առաջարկեն թէ բնակարանի վարձքի համար եկամուտին 30% տակոսէն աւելի պէտք չէ ծախսուի:

ՎԱՐՁՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՍՏՈՂԱԳՐԵԼ

Շատ կալուածատէրեր կը պահանջեն վարձակալման պայմանագիր (lease), որ օրինաւոր պայմանագիր է: Ձեր վարձակալման պայմանագիրը պէտք է նշէ ձեր վարձքի համաձայնութեան տեւողութիւնը (սովորաբար 12 ամիս), վարձքի գինը եւ ինչ ներառուած է ձեր վարձքին մէջ, օրինակ ինքնաշարժի կանգատ (parking), հեռատեսիլ, էլեկտրականութիւն կամ կազ:

Շատ կալուածատէրեր նաեւ կը պահանջեն մէկ ամսուայ վարձքի հաւասար գումար մը ի պահ դնել (deposit) որը կը սեպուի ձեր վերջին ամսուայ վարձքը:

ՎԱՐՁՔ ՎՃԱՐԵԼ

Սովորաբար կը վճարէք ձեր վարձքը ամէն ամսուայ առաջին օրը հետեւեալ երեք ձեւերէն մէկով:-

- Դրամագումարով (Cash) - Վստահ եղէք որ ստանաք ստացագիր մը ամբողջ գումարին արժէքով:
- Յետ-թուագրուած վճարագրեր (cheques) - Յաջորդ ամիսներու ամսաթիւով գրուած որ չեն կրնար գանցել փնչն այդ թուականը: Ձեր կալուածատէրը կարող է ձեզմէ խնդրել, յետ-թուագրուած վճարագրեր որ կը ծածկեն ձեր վարձակալման պայմանագրին ժամանակամիջոցը:
- Վաւերացուած վճարագիր, որ ձեր դրամատունը ապահոված է: Ձեր կալուածատէրը կարող է խնդրել որ ձեր առաջին եւ վերջին ամիսներու վարձքերը վկայացուած ըլլան:

 findlink.at/Money-Finances

ՎԱՐՁԵԼ:- ԻՐԱՌՈՒՆՔՆԵՐ ԵՒ ՊԱՅՄԱՆԱՍԻՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Residential Tenancies Act (RTA) օրէնքն է, որ կը կառավարէ բնակարանում Օնթարիոյի մէջ: Այս օրէնքը կը պարունակէ բոլոր կանոնները որոնց պէտք է հետեւին կալուածատէրերը եւ վարձակալները, ներառեալ երբ եւ ինչպիսի կալուածատէրը կարող է ձեր վարձքը աւելցնել, եւ որքան ժամանակ առաջ պէտք է լուր տաք ձեր կալուածատիրոջը երբ կը ցանկանաք ելլել տունէն:

- Ընթերցելու համար RTA-ի մասին այցելեցէք Ministry of Municipal Affairs and Housing-ի ուէպ սայթը: mah.gov.on.ca կամ findlink.at/rtact
- Տեղեկութիւն ստանալու համար օրէնքներու մասին որոնց կալուածատէրերը եւ վարձակալները պէտք է հետեւին, հեռաձայնեցէք Landlord and Tenant Board 1-888-332-3234 կամ այցելեցէք ltb.gov.on.ca

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ՕԳՆՈՒԹԵԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ

Օնթարիոյի շատ մը քաղաքները ունին կարգ մը կառավարութեան օգնութեամբ բնակարաններ (յաճախ կը կոչուին - *subsidized* - ֆինանսատրակն օժանդակութիւն), որտեղ ձեր վարձքը հիմնուած է ձեր եկամուտին համեմատ: Այսպիսի բնակարան մը ունենալու սպասման ժամանակը կարող է երկար ըլլալ - երբեմն տարիներ:

Յաւելեալ տեղեկութիւններու համար ֆինանսատրուած բնակարաններու մասին ձեր շրջանին մէջ, դիմեցէք ձեր հաստատման խորհրդատուին:

Ontario Ministry of Municipal Affairs & Housing

Կարդացէք նախարարութեան բնակարանի օրէնքներուն մասին:- www.mah.gov.on.ca կամ findlink.at/ont-mmah

Canada Mortgage & Housing Corporation

Կարդացէք *Renting Your First Home in Canada: What Newcomers Need to Know*- Ձեր առաջին տուն վարձելը Գանատայի մէջ:- Բնչ որ պէտք է գիտնան նոր եկողները: cmhc.ca կամ findlink.at/cmhcnc

Settlement.org

Կը գտնէք մանրամասն տեղեկութիւններ բնակարանի մասին Օնթարիոյի մէջ settlement.org կամ findlink.at/housinginf

Housing Help Association of Ontario

Կարդացէք ընձայուած ծառայութիւններուն մասին այն անձերուն որ անտուն են կամ կարող են անտուն դառնալ:- findhousinghelp.ca





Մտածելու կէտեր

Կա՞յ այդ շրջանին մէջ, ուր ես կ'ուզեմ ապրիլ, առանց շահակալութեան բնակարան (co-op). Ինչպէ՞ս կրնամ դիմել:

Ինչպէ՞ս անունս կ'արձանագրեմ կառավարութեան օգնութեամբ բնակարանի սպասման ցանկի մը մէջ:

Եթէ ես որոշեմ տուն գնել, ո՞րմէ՞կ դրամատուներ կամ ապառիկ միութիւնը (credit union) պիտի յատկացնէ ինծի համար կալուածի գրաւով դրամ (mortgage):

Եթէ ես որոշեցի տուն գնել, որքա՞ն դրամ պէտք է խնայեմ կանխավճարի համար:

Ի՞նչ ծախսեր ներառեալ են իմ վաճառքիս մէջ: ջեռնութիւն, օդակայքատրչութիւն, գործիքներ, ինչպէս սառնարան մը և փուռ մը:

ԱՌԱՅ ՇԱՀԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ (CO-OP) ԲՆԱԿԱՐԱՆ

Co-op բնակարանը կը պատկանի եւ կը կառավարուի այնտեղ ապրող մարդոց կողմէ: Առանձ շահարկութեան (co-op) բնակարանի վարձքերը յաճախ աւելի քիչ են համեմատաբար վարձքերու միջին գիներէն: Co-op անդամներէն կը սպասուի օգնել կառավարելու և պահպանելու իրենց co-op բնակարանը: Սովորաբար երկար սպասման ժամանակամիջոց կայ co-op բնակարան ունենալու համար - ընդհանրապէս երկուքէն մինջեւ չորս տարիներ: Գտնելու ցուցակ մը առանց-շահարկութեան co-op բնակարաններու ձեր շրջանին մէջ փնտռեցէք ինթըրնէթին մէջ գրելով *non-profit co-op housing*:

findlink.at/HousingInCanada

ՏՈՒՆ ԳՆԵԼ

Տուն գնելու համար պէտք է լաւ ծրագրել, լաւ միտք է սկսիլ տեղեկութիւններ հաւաքել ամենաշուտ ձեռով:

Առաջին անգամ ըլլալով տուն գնողներու համար, կարդացէք Canada Mortgage and Housing Corporation-ի գրքոյկը, նոր եկողներուն համար որ կ'ուզեն սեփական տուն գնել: cmhc.ca կամ findlink.at/cmhcnc

Երբ կը փորձէք գրաւով դրամ առնել (mortgage) տուն գնելու համար անհրաժեշտ է լաւ դրամական վարկի անցեալ ունենալը: Իբր նոր եկող, կրնաք չ'ունենալ Գանատական դրամատուներու կողմէ ճանչցուած դրամական վարկի անցեալ մը: Ուրեմն պէտք է սկսիք իրենց վստահութիւնը շահիլ այնքան շուտ որքան կարելի է: Խօսեցէք յաճախորդի ծառայութեան ներկայացուցիչի մը հետ ձեր դրամատան մէջ թէ ինչպէս կարելի է դրամական վստահութիւն շահիլ:

Երբ դուք պատրաստ էք տունի մը առաջարկ ընելու, լաւ միտք է որ գնումի համար պայման դնէք որ տունը ենդարկուի մասնագիտական վերստուգման: Եթէ տեսուչը տեսնէ որ վերանորոգումներու կարիք կայ կրնաք չեղեալ համարել կամ փոխել ձեր առաջարկը:

findlink.at/HousingInCanada

ՀԵՏ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՌԵՍՍՆՈՂԻ ԲՆԱԿԱՐԱՆ

Շատ մը համալսարաններ եւ վարժարաններ կ'ապահովեն բնակարան իրենց ուսանողներուն համար: Յաւելեալ տեղեկութեան համար կապ պահեցէք այդ համալսարանի կամ վարժարանի բնակարանի բաժնին հետ որ դուք կը ծրագրէք յաճախել:

Համալսարանի եւ վարժարանի բնակատեղերը երբեմն ձեռնտու են ոչ-ուսանողներու համար ամրան ընթացքին: Անոնք կարող են աժան գինով ժալու տեղ ըլլալ նոր եկողներու և ճամբորդողներու համար:

findlink.at/HousingInCanada

ԱՐՏԱԿԱՐԳ ԲՆԱԿԱՐԱՆ (ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐ)

Ապաստարանները կ'ապահովեն կարճ ժամանակի բնակարան անոնց համար

որոնք անտուն են կամ տագնապի մէջ են: Եթէ վտարուած էք ձեր տունէն կամ վատ ձեռով վարուած են ձեր հետ տունին մէջ, կրնաք ժալ ապաստարանի մը մէջ: Ձեր հեռաձայնի գիրքին սկիզբը նշուած են հեռաձայնի թիւերը տեղական ապաստարաններու եւ ուրիշ արտակարգ թիւեր: Կրնաք նաեւ հեռաձայնել 211:

findlink.at/HousingInCanada

ԲՆԱԿԱՐԱՆ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Կրնաք գտնել տեղական կառավարութեան օգնութեամբ բնակարան ձեր հեռաձայնի գիրքին (Blue Pages) Կապոյտ էջերուն մէջ: Անձնական տարեցներու բնակատեղերու համար նայեցէք Դեղին էջերուն մէջ կամ այցելեցէք yellowpages.ca

Յաւելեալ տեղեկութիւններու համար բազմազան ծառայութիւններու մասին, ներառեալ բնակարանը, հեռաձայնեցէք Ontario Seniors' Secretariat, 1-888-910-1999, կամ այցելեցէք seniors.gov.on.ca կամ findlink.at/seniorguid

ՕՆԹԱՐԻՈ ՄԱՐԻՈՒ ԻՐԱՌՈՒՆՔՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԳԻՐ ԵՒ ԲՆԱԿԱՐԱՆ

(Ontario Human Rights Code) մարդու իրաւունքներու օրինագրի տակ, չ'ըլլար ձեր հետ անիրաւացիօրէն վարուիլ, ձեր ցեղի, նախնիքներու, էթնիկ ծագման, գոյնի, ազգային ծագման, քաղաքացիութեան, կրօնքի, տարիքի, սեռի, սեռական կողմնորոշման, յանցագործութիւններու, ամուսնական կարգավիճակի, նոյն-սեռի

յարաբերութեան, ընտանեկան վիճակի կամ հաշմանդամութեան պատճառներով: Աւելի գիտնալու համար ձեր իրաւունքներու մասին, այցելեցէք

Ontario Human Rights Commission-ի ուէպ սայթը ohrc.on.ca կամ findlink.at/ohrhousing



ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Համայնքի եւ հանգիստի ծրագիրները կարող են ձեզ օգնել հանդիպելու մարդոց հետ, զորացնել ձեր լեզուի հմտությունները եւ ժամանցի գործունեություններու մասնակցի: Գիտցեք համայնքի գործունեություններուն մասին որ ձեռնտու են ձեզի և ձեր ընտանիքին համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒԾՄԱՆ ԿԵՂՈՆՆԵՐ

Ամեն քաղաք Օնթարիոյի մէջ ունի համայնքի ծրագիրներ եւ հանրային կազմուրման կեդրոններ: Բոլոր կեդրոնները ունին տարածություններ ուր տեղ համայնքի խումբերը կարող են հանդիպիլ: Շատ կեդրոններ նաեւ ունին սառնոցի վրայ սահելու վայրեր, լողաւազաններ, մարզատեղեր և մարզական դաշտեր: Ծրագիրները և հաստատությունները անվճար են կամ չնչին արժէք ունին:

Աւելի գիտնալու համար գործունեություններու եւ ծրագիրներու մասին ձեր տեղական համայնքի կազմուրման կայանին վերաբերեալ, խօսեցեք ձեր հաստատման խորհրդատուին հետ, հեռաձայնեցեք **211**, ձեր հեռախօսագիրքին (Blue Pages) կապոյտ էջերուն մէջ նայեցեք կամ ինթըրնէթին մէջ փնտռեցեք: - *Community Recreation Centre + ձեր գիւղաքաղաքին անունը*:

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Ձեր տեղական հանրային գրադարանին մէջ, կրնաք գտնել գիրքեր, CD-ներ, DVD-ներ, ամսագիրքեր և թերթեր, անգլերէնով և այլ լեզուներով: Գրադարաններու մեծ մասը նաեւ կ'ապահովեն անվճար ինթըրնէթի մուտք: Գրադարանները ունին զանազան ծրագիրներ չափահաս անձերու և մանուկներու, ներառեալ ընթերցանութեան և պատմութիւն պատմելու ակումբներ, լեզուի դասընթացքներ նոր եկողներուն և գիրք գրողներու ընթերցման նիստեր որպէսզի կարդան իրենց գրած գիրքերը: Կարգ մը գրադարաններ նաեւ կ'ապահովեն աշխատանքի տեղեկություններ:

Գտնելու ձեր տեղական հանրային գրադարանը, այցելեցեք Ministry Of Tourism, Culture and Sport: mtc.gov.on.ca կամ findlink.at/opl

Ստանալու գրադարանի քարտ, պէտք պիտի ունենաք մէկ պաշտօնական փաստաթուղթի (անցագիր կամ վարորդի արտօնագիր) եւ ապացոյց ձեր հասցէին (օրինակ հեռաձայնի, էլեկտրականութեան կամ հեռատեսիլի ստացագիր):

ԵՐԿՐԱՍԳՈՒԹԵԱՆ ՏԵՂԵՐ

Իրաւունքներու և ազատութեան արտոնագրին տակ (*Charter of Rights and Freedoms*), Գանատացիները ազատութիւնը ունին իրենց կրօնական պաշտամունքը կատարելու: Մինչ Օնթարիոն աշխարհիկ հասարակութիւն մըն է, Օնթարիացիները կ'արտայայտեն իրենց հաւատքը հաւաքուելով եկեղեցիներու, սինակոկներու, մզկիթներու, տաճարներու և ուրիշ երկրպագութեան տեղեր:

Գտեք ձեր մօտ երկրպագութեան տեղերը ինթըրնէթին մէջ փնտռելով (*Places of Worship + ձեր գիւղաքաղաքին անունը*):

ԿԱՄԱՌՈՐՈՒԹԻՒՆ

Ձեր ժամանակը նուիրելը արժանի հարցի մը համար լաւ ձեւ մըն է մարդոց հետ հանդիպելու եւ աւելի լաւ գիտնալու ձեր համայնքը: Կամաւորութիւնը կարող է նաեւ ըլլալ աշխատանք փնտռելու օգտակար ձեւ մը, կարող էք շահիլ կարեւոր անձերու ցանց մը եւ կ'աւելցնէ ձեր աշխատանքի փորձարութիւնը: Կարգ մը կազմակերպություններ կը խնդրեն որ դուք ոստիկանական ստուգման ենթարկուիք ձեր անցեալին վերաբերեալ նախքան ձեզ ընդունիլը որպէս կամաւոր:

- Գիտնալու աւելի կամաւորութեան մասին եւ գտնելու կամաւորութեան կեդրոն ձեր շրջանին մէջ, այցելեցեք Ontario Volunteer Centre Network ovcn.ca
- Այցելեցեք Ministry of Labour, Immigration, Skills Development and Training: ontario.ca կամ findlink.at/mci-active
- Հարցուցեք ձեր հաստատման խորհրդատուին կամաւորական հնարաւորություններու մասին ձեր շրջանին մէջ:
- Հեռաձայնեցեք **211**:



ՓՈԽԱԴՐՈՒՄ

Եթե պետք ունիք ձեր գործատեղը հասնիլ, ծանոթանալ ձեր նոր շրջանին կամ տանիլ ձեր մանուկները դպրոց, ձեր նոր գիտաքաղաքին կամ քաղաքին մեջ շրջիլը կարելու է ձեր համայնքին մեջ հաստատման համար:

Վարորդի արտոնագիր

Ձեր Օնթարիոյի վարորդի արտոնագիրը ինչպես ստանալու տեղեկություն համար, այցելեցեք drivetest.ca կամ findlink.at/driverinfo

Վարորդի քննության կետեր

Գտեք ձեր տեղական վարորդի քննության կետերները ձեր հեռախոսագիրքին դեղին էջերում մեջ, այցելեցեք yellowpages.ca կամ այցելեցեք DriveTest drivetest.ca կամ findlink.at/testcentre

Վարորդի գրքոյկ

Կարդացեք ճանապարհի կանոնները եւ պատրաստուեցեք ձեր գրաւոր քննության, այցելեցեք www.mto.gov.on.ca կամ findlink.at/dhandbook: Կրնաք տպուած գրքոյկը գնել որեւէ վարորդի քննության կետում մը եւ շատ մը մանրածախ խանութներէ:

Ճեծիք բջել և ապահովություն

Հեռաձայնեցեք ServiceOntario 1-800-267-8097 կամ այցելեցեք www.mto.gov.on.ca կամ findlink.at/cycling

ՀԱՆՐԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ

Օնթարիոյի ամենաշատ քաղաքները ունին համեմատաբար աժան հանրային փոխադրության համակարգ: Մեծ քաղաքները ունին լաւ զարգացած հանրային փոխադրության միջոցներ որ կը ներառեն պասեր, շոգեկառքեր, գետնուղի (subway) և ինքնաշարժեր: Ցաճախ աւելի աժան և հեշտ է գնել ամսական քարտեր կամ մեծաքանակ տոմսեր / մետաղանիշեր:

Գիտնալու համար հանրային փոխադրումի մասին ձեր շրջանին մեջ, ստուգեցեք կապոյտ էջերը (Blue Pages) ձեր հեռաձայնի գիրքին մեջ կամ այցելեցեք Ministry of Transportation www.mto.gov.on.ca կամ findlink.at/transit

ՀԱՆՐԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄԻ ՎԱՐՈՒՆԵԼԱԿԵՐՊ

Վարուելակերպ կը նշանակէ քաղաքավար վարմունք ժողովրդական տեղերու մեջ: Ցաւելեալ տեղեկություն համար վարուելակերպի մասին հանրային փոխադրումի ընթացքին, հաճեցեք կարդալ այս նիւթին մասին *Welcome to Canada*-ի մեջ:

ԹԱՔՍԻՆԵՐ

Օնթարիոյի շրջաններու մեծ մասին մեջ, կրնաք թաքսի վարձել որպէսզի ձեզի առնէ եւ տանի ձեր ցանկացած տեղը: Թաքսիները կարող են սուղ ըլլալ, այդ պատճառաւ հարցուցեք ձեր վարորդին մօտաւոր գինը նախքան սկսիլ ձեր ուղեւորին: Նաեւ կարելու է որ յստակօրէն տեսնէք հաշուիքը (որ ցոյց կու տայ արժէքը ուղեւորին):

Տեղական թաքսիի ընկերություն գտնելու համար բացեք դեղին էջերը (Yellow Pages) ձեր հեռաձայնի գիրքին մեջ կամ այցելեցեք yellowpages.ca

ԻՆՔՆԱՇԱՐԺ ՎԱՐՁԵԼ

Եթե ինքնաշարժ չ'ունիք, ինքնաշարժ վարձելը կարող է շատ յարմար ըլլալ: Ուշադրութեամբ կարդացեք վարձքի պայմանագիրը ստորագրելէ առաջ: Պէտք է նաեւ ունենաք ապահովագրութեան նպաստ: Շատ մը աւելի մեծ քաղաքներու մեջ, կրնաք մասնակցիլ ինքնաշարժի միասնաբար-օգտագործելու ծառայութեան մը, ինչպէս Zipcar, որ կը թոյլատրէ ձեզ վարձել ինքնաշարժ մը կարճ ժամանակամիջոցներու համար տեղական գործեր կատարելու: Այս ծառայությունները ընդհանրապէս ունին յարմար ինքնաշարժը առնելու և դնելու կայաններ:

Գտնելու համար տեղական ինքնաշարժ-վարձելու ընկերություններ եւ մասնակցելու ինքնաշարժի միասնաբար-օգտագործելու ծառայություններու, բացեք դեղին էջերը (Yellow Pages) ձեր տեղական հեռաձայնի գիրքին մեջ կամ այցելեցեք yellowpages.ca

ՎԱՐՈՐԴԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼ

Եթե ձեր երկրէն վարորդի արտոնագիր ունիք, ան ի գորու է 60 օր ձեր Գանատա ժամանման թուականէն, որմէ վերջ կարիք պիտի ունենաք Օնթարիոյի վարորդի արտոնագրի:

Ձեր նախկին երթեւեկի պատմությունը նկատի պիտի առնուի երբ դիմէք Օնթարիոյի արտոնագրի համար: Ամենայն դեպս, եթէ ունեցած էք արտոնագիր կամ ոչ, պիտի Օնթարիոյի երթեւեկի օրէնքներու վերաբերեալ գրաւոր քննութենէ անցնիք նաեւ մէկ կամ երկու ճանապարհի քննություններ:

Վարորդի արտոնագիրը պաշտօնական նոյնացնումի փաստաթուղթ է:

Եթե նախընտրէք վարորդի արտոնագիր չ'ստանալ և ուզէք ունենալ պաշտօնական նոյնացնումի փաստաթուղթ կրնաք դիմել Ontario Photo Card-ի որ նաեւ կը համարուի պաշտօնական նոյնացնումի փաստաթուղթ:

Դիմելու համար պէտք պիտի ունենաք ցոյց տալ ձեր բուն նոյնացնումը որու մեջ գրուած է ձեր օրինաւոր անունը, ծննդեան թուականը և ստորագրությունը: Նաեւ պէտք է դիմումաթուղթ մը լեցնել: Այս քարտին վճարումը \$35 է: Ցաւելեալ տեղեկություններու համար, այցելեցեք serviceontario.ca կամ ontario.ca/government/ontario-photo-card:

Հաճեցեք տեղեկանալ թէ չէք կրնաք ունենալ վարորդի արտոնագիր եւ Ontario photo card, պէտք է ընտրեք երկուքն մէկը:

ԻՆՔՆԱՇԱՐԺ ԶԵՆԼՈՒ ՕՐԵՆՔՆԵՐ

Ինքնաշարժ բջելու օրէնքները խախտելու





տուգանքները ծանր են: Կարգ մը կարելու օրէնքներն են:-

- Պէտք է ունենաք վարորդի արտօնագիր որպէսզի ինքնաշարժ քշէք եւ այն միշտ ձեր հետ պէտք է ըլլայ:
- Պէտք է ունենաք ինքնաշարժի ապահովագրութիւն:
- Պէտք է ունենաք ապացոյց ինքնաշարժի սեփականութեան – ինքնաշարժին մէջ պահեցէք:
- Երբեք արագութեան սահմանը մի անցնիք: Արագութեան տուգանքները բարձր են եւ կարող են պատճառ ըլլալ աւելի բարձր ապահովագրութեան արժեքներու:
- Դուք եւ ձեր բոլոր ուղեւորները պէտք է որ ամրագոտի դնէք:
- Երբեք մի խմէք եւ քշէք, եթէ ռատիկանութիւնը գտնէ թէ կը քշէիք երբ ձեր արեան մէջ խմիչքի մակարդակը օրինաւոր սահմանէն աւելի է պատիժները խիստ են:
- Երբեք մի գործածէք ձեր բջիջային հեռաձայնը ինքնաշարժ քշած ատեն, բացի եթէ առանց ձեռք գործածելու գործիք է:

 findlink.at/DrivingInCanada

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Օնթարիո ունի (no-fault) ոչ-սխալի ապահովագրութեան ծրագիր: Այս կը նշանակէ որ ձեր ապահովագրական ներկայացուցիչը կը վճարէ որեւէ փաստի համար ձեր ինքնաշարժին վերաբերեալ, փաստի պատճառը ըլլայ ձեր սխալը կամ միւս վարորդինը:

Աւելի գիտնալու ոչ-սխալի ապահովագրութեան մասին այցելեցէք Insurance Bureau of Canada ուեյ սայթը: ibc.ca կամ findlink.at/nofault

Ինքնաշարժի ապահովագրութեան արժեքը կը տարբերի ընկերութենէ ընկերութիւն: Կապ պահեցէք կարգ մը ընկերութիւններու հետ որպէսզի գինը արժէք, կամ կապ պահեցէք ապահովագրութեան յանձնակատարի մը հետ որ պիտի փորձէ ամենալաւ գինը տալ: Յանձնակատարներու և ապահովագրութեան ընկերութիւններու հետ կապ պահելու տեղեկութիւններ գտնելու համար, այցելեցէք yellowpages.ca կամ փնտռեցէք ինթըրնետին մէջ:

ՀԵԾԻՔ ՔՇԵԼ

Ձեր նոր համայնքին մէջ, հեծիք քշելը կարող է շատ լաւ փոխադրամիջոց մը ըլլալ: Կարգ մը քաղաքներ տրամադրած են հեծիքներու մասնաւոր նեղ ճամբաներ շրջողներու համար, և ունին կազմուրման հեծիքի ուղիներ: Հեծիքը ինքնաշարժ կը սեպուի Օնթարիոյի Մայրուղիի Երթեւեկի Կանոնին համեմատ (*Ontario Highway Traffic Act*): Այս կը նշանակէ թէ պէտք է ենթարկուիք երթեւեկի ամբողջ օրէնքներուն:

Հաճեցէք նշել թէ, օրէնքով, ամէն հեծիք քշող, որ 18 տարեկանէն վար է, պարտաւոր է դնել ընդունուած հեծիքի գլխակալ:

Մտածելու կէտեր

Եթէ ընտրեցի չ'ստանալ Օնթարիոյի վարորդի արտօնագիր, ի՞նչ ձեռք կ'առնեմ արտօնագրէն կողմէ տրուած լուսանկարով նոյնացնումի փաստաթուղթ պէտք է օգտագործեմ անոր փոխարէն:

Որքա՞ն գումարի պէտք պիտի ունենամ գնելու համար նոր կամ գործածուած ինքնաշարժ մը: Որքա՞ն է ապահովագրութիւն գնելու արժեքը եւ վճարելու ինքնաշարժի արցանագրութեան եւ արտօնագրութեան համար:

ՕՐԻՆԱԴՈՐ ԻՐԱԴՈՒՆՔՆԵՐ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆետերալ եւ գաւառական կամ տարածքային օրէնքները կը պաշտպանեն անհատական իրաւունքները և ազատութիւնները, ինչպէս անկախութիւնը և հաւասարութիւնը: Մեր օրինաւոր համակարգը հիմնուած է օրէնքի կանոնին և ժողովրդավարական սկզբունքներու վրայ:

ԳԱՆԱՏԱԿԱՆ ԻՐԱԴՈՒՆՔՆԵՐՈՒ և ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Գանատական իրաւունքներու և ազատութիւններու կանոնադրութիւնը կը պաշտպանէ նոյն իրաւունքներն ու ազատութեան աստիճանները թէ տղամարդոց և թէ կանանց:-

- Ազատութիւնը ձեր համոզմունքները և կարծիքները արտայայտելու:
- Ազատութիւնը որեւէ ուզած անձի հետ կապակցելու եւ հաւաքուելու խաղաղօրէն ուրիշ մարդոց հետ:
- Ազատութիւնը ձեր կրօնքին հետեւելու:
- Իրաւունքը ապրելու որեւէ մէկ տեղ Գանատայի մէջ:
- Իրաւունքը պաշտպանութեան հակաօրինական կամ անարդար ձերբակալումէ կամ կալանումէ և իրաւունքը ունենալու պատշաճ օրինաւոր գործընթացքի: Ասիկա կը նշանակէ որ կառավարութիւնը պէտք է յարգէ բոլոր ձեր իրաւունքները օրէնքի տակ:
- Իրաւունքը հաւասար պաշտպանութեան եւ հաւասար օգուտը օրէնքէն առանց խտրութեան հիմնուած ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման, գոյնի, կրօնքի, սեռի, տարիքի կամ մտային կամ ֆիզիքական հաշմանդամութեան վրայ:
- Իրաւունքը ստանալու ծառայութիւններ ֆետերալ կառավարութենէն անգլերէնով կամ ֆրանսերէնով:

Կարդացէք կանոնադրութիւնը ֆետերալ Department of Justice-ի ուեյ սայթին մէջ: justice.gc.ca կամ findlink.at/constiacts

 findlink.at/HumanRights

ՕՆԹԱՐԻՈՅԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱԴՈՒՆՔՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԳԻՐ

Օնթարիոյի մարդու իրաւունքներու օրինագիրը կը պաշտպանէ բոլոր Օնթարիացիները անիրաւացի վարմունքներէ որոշ ասպարէզներու մէջ, ինչպէս աշխատանք, բնակարան եւ ծառայութիւններ: Անիրաւ է գատողութիւն ընել կամ տանջել անձ մը հիմնուելով իր ցեղին, նախնիքներուն, ծագման վայրի, գոյնի, էթնիկական պատկանելութեան, սեռական կողմնորոշման, յանձնառւթեան անցեալին, ամուսնական կարգավիճակին, նոյն-սեռէ յարաբերութեան կարգավիճակին, ընտանեկան կարգավիճակին կամ հաշմանդամութեան վրայ: Այցելե՛ք Ontario Human Rights Commission ohrc.on.ca

ՀԱՓԱՀԱՍ ՀԱՄԱՐՈՒԵԼՈՒ ՏԱՐԻՔ և ԹՈՅԼԱՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՔ

Օնթարիոյի մէջ, չափահաս համարուելու տարիքը 18-ն է, այս կը նշանակէ թէ անձը օրէնքով կը համարուի չափահաս անձ: Թոյլատուութիւնը սեռային գործունէութեան 16 տարեկանն է: Ամբողջ սեռային գործունէութիւնները թոյլատուութեան տարիքէն առաջ յանցագործութիւն են:



Յաւելեալ տեղեկութիւններու համար
թոյլատուութեան տարիքի մասին, այցելեցէք
justice.gc.ca կամ findlink.at/ageconsent

ՓԱՍՏԱԲԱՆ ԳՏՆԵԼ

- Ձեր հաստատման խորհրդատուն կարող է ձեզ օգնել գտնելու փաստաբան մը այն փորձառութեամբ որ դուք կարիքը ունիք:
- Նայեցէք ձեր տեղական հեռախօսագրքի դէղին էջերուն մէջ կամ այցելեցէք yellowpages.ca
- Փաստաբաններու եւ իրաւաբանի օգնականներու տեղեկագրքի համար Օնթարիոյի մէջ այցելեցէք Law Society of Upper Canada lsuc.on.ca կամ findlink.at/tlsuc
- Legal Aid Ontario կը մատակարարէ օրինային ծառայութիւններ այն անձերուն որ քիչ եկամուտ ունին: Հեռաձայնեցէք 1-800-668-8258 կամ այցելեցէք legalaid.on.ca

ՆԵՐԳԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԱԲԻՍ

Կանադայում կանեփի օգտագործումը օրինական է: Օնտարիոյի կառավարությունը կանտներ ունի՝ մարդկանց անվտանգությունն ապահովելու համար՝ հանգստի նպատակով կանեփի գնելիս և օգտագործելիս:

Հանգստի նպատակով կանեփի գնելու, օգտագործելու, պահելու և աճեցնելու համար դուք պետք է լինէք 19 տարեկան և բարձր, և կարող եք ունենալ առավելագույնը 30 գրամ չորացրած կանեփի (կամ համարժեք) հանրային վայրերում՝ ցանկացած պահի, առցանց գնելով Օնտարիոյի կանեփի խանութից (OCS) կամ Օնտարիոյի խաղային հանձնաժողովի (AGCO) կողմից լիցենզավորված խանութից: Դուք կարող եք ծխել և վելպել կանեփի այնտեղ, որտեղ ծխախոտի ծխելը թույլատրվում է: Կանեփը Կանադայի ազգային սահմաններից դուրս տեղափոխելն անօրինական է: Ձեր համայնքները կարող են ունենալ կանոնադրություններ տեղական մակարդակով կանեփի օգտագործումը կարգավորելու համար: Ավելին իմանալու համար այցելեք canada.ca

Օրենքից դուրս գործող անձինք կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել «Կանեփի մասին դաշնային օրենքի» համաձայն: Արդյունքում, մշտական բնակիչները կարող են կորցնել իրենց կարգավիճակը, իսկ ժամանակավոր բնակիչները կարող են չկարողանալ մուտք գործել կամ ծնալ Կանադայում: Բնացէք ավելին պատժամիջոցների մասին՝ canada.ca

Մարդու իրաւունքներու օրինային աջակցութեան կէդրոն (Human Rights Legal Support Centre)

Կ'օգնէ եւ կը ներկայացնէ այն մարդիկը որոնք կը զգան թէ իրենց հանդէպ զատողութեամբ վարուած են: hrlsc.on.ca

Օնթարիոյի մարդու իրաւունքներու պաշտպան (Ombudsman of Ontario)

Կ'օգնէ այն մարդոց որոնք կը զգան թէ անիրաւացիօրէն վարուած է Օնթարիոյի կառավարութիւնը իրենց հետ: ombudsman.on.ca

Justice Ontario

Տեղեկութիւններու համար Օնթարիոյի օրինային համակարգին մասին 12 լեզուներով: attorneygeneral.jus.gov.on.ca կամ findlink.at/on-justice

Settlement.org

Տեղեկութեան համար Գանատական օրինային համակարգի եւ օրինային ծառայութիւններու մասին: settlement.org կամ findlink.at/legal-serv

Community Legal Education Ontario

Կ'արտադրէ նիւթեր որ կը նկարագրեն օրենքը պարզ լեզուով որպէսզի օգնէ մարդոց հասկնալու եւ գործադրելու իրենց օրինային իրաւունքները: cleo.on.ca

ՀԱՍՏԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատման ծրագրին փոխազդող տարրերակի համար, հաճեցեք այցելել settlement.org/o2o

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

- ☐ Այցելեցեք ServiceOntario կեդրոն մը դիմելու համար ձեր OHIP քարտին:
- ☐ Գտեցեք բժշկական ապահովագրություն ձեր առաջին 3 ամիսներուն համար Գանատայի մէջ:
- ☐ Գտեք ընտանիքի բժիշկ:
- ☐ Գտեք ամենամօտ հիւանդանոցը եւ walk-in clinic:

1. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ՄՊԱՌՈՂԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

- ☐ Պտուտեցեք նպարեղէնի խանութները եւ շուկաները ձեր համայնքին մէջ գիտնալու համար որքա՞ն կ'արժեն ուտելիքները:
- ☐ Գտեք հեռախօսահամար մը, որտեղ կարելի է ձեզի հասնիլ եւ ձեզ հետ կապ պահել:
- ☐ Գիտցեք ուր հնարաւորութիւն կայ ինթըրնէթ մտնել երբ անհրաժեշտ է:

1. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ԲՆԱԿԱՐԱՆ

- ☐ Բնակարան գտնել որ կը համապայմանէ ձեր պիտճէն:
- ☐ Հասկցեք ձեր իրաւունքները և պարտականութիւնները որպէս վարձակալ, եթէ պիտի վարձէք:

- ☐ Դասաւորեցեք բոլոր բնակարանի վերաբերեալ ծախսերը, ներառեալ ապահովագրութիւն, սպասարկութիւն եւ սեփականութեան տուրքեր:

1. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

- ☐ Գիտցեք ծրագիրներու և հաստատութիւններու մասին ձեր տեղական համայնքի կեդրոնին մէջ:

- ☐ Գտեք ձեր ապրելավայրի մէջ գտնուող հանրային գրադարանին տեղը եւ ստացեք գրադարանի քարտ:

1. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ՓՈԽԱՂՈՒՄ

☐ Գիտցե՞ք հանրային փոխադրումի ընտրություններուն մասին որ ձեռնտու են ձեր համայնքին մէջ:

☐ Դիմել Օնթարիոյի վարորդի արտօնագրի համար:

1. Պարտականութիւն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականութիւն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականութիւն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ՕՐԻՆԱԴՈՐ ԻՐԱԽՈՒՆՔՆԵՐ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Պարտականութիւն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականութիւն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականութիւն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ՈՒՍՈՒՄ ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Այս բաժինը կը ներկայացնէ տեղեկութիւններ ուսման եւ վարժութեան հնարաւորութիւններու մասին, մանուկի խնամքէ սկսեալ մինջեւ բարձր ուսում: Նաեւ կը ներկայացնէ չափահասերու ուսում շարունակելը եւ լեզուի մարզումը:

30

Մանուկի խնամք

31

Տարրական և երկրորդական ուսում

33

Ցեռ- երկրորդական ուսում

34

Ուսում շարունակել

35

Լեզուի մարզում

36

Հաստատման ծրագիր





ՄԱՆՈՒԿԻ ԽՆԱՄՔ

Օնթարիոյի մէջ կան բազմաթիւ մանուկներու խնամքի (նաեւ կը կոչուի daycare) ընտրութիւններ: Կրնաք արձանագրել ձեր գաւակը ծառայութեան մը մէջ որ ամենալաւ ձեւով յարմար է ձեր ընտանիքին:

ԱՐՏՕՆԱԳՐՈՒԱԾ ԵՒ ԱՌԱՆՑ ԱՐՏՕՆԱԳՐԻ ՄԱՆՈՒԿԻ ԽՆԱՄՔ

Օնթարիոյի մէջ երկու տեսակ մանուկի խնամք կայ: Արտօնագրութիւն ունեցող (երբեմն կը կոչուի պաշտօնական *formal*) եւ արտօնագրութիւն չունեցող (երբեմն կը կոչուի ոչ-պաշտօնական *informal*):

Խնամք տուողները, որոնք կը խնամեն աւելի քան հինգ մանուկներ, որոնք իրարու ազգական չեն, եւ որոնք տասը տարեկանէ պակաս են, պէտք է արտօնագիր ունենան Ministry of Education-էն, *Day Nurseries Act*-ի օրէնքի տակ: Արտօնագրուած մանուկի-խնամքի ծրագիրները պէտք է որ համապատասխանեն իւրայատուկ գաւառական չափանիշներու:

Առանց արտօնագրի մանուկի խնամքը անձնական համաձայնութիւն մըն է խնամողին և ծնողքին միջեւ: Խնամք տուողները, որոնք կը խնամեն հինգ կամ հինգէն պակաս մանուկներ, որոնք ազգական չեն, ստիպուած չեն արտօնագիր ունենալու:

Ամէն մանուկի խնամք մատակարարող ունի տարբեր կանոններ: Ոմանք կը պահանջեն որ ձեր մանուկը լման ժամանակ ներկայ ըլլայ: Ուրիշներ կ'ապահովեն մաս մը ժամանակով կամ քիչ ժամանակի խնամք: Կարող է որ սպասման ցուցակները երկար ըլլան և վճարները շատ տարբեր:

Աւելի գիտնալու ձեր մանուկի խնամքի վերաբերեալ ընտրութիւններու մասին, այցելեցէք Ministry of Education: edu.gov.on.ca կամ findlink.at/childcare

ՄԱՆՈՒԿԻ ԽՆԱՄՔԻ ՖԻՆԱՆՍԱՌՈՐՈՒՄ

Որոշ ֆինանսատրումներ ձեռնտու են օգնելու ընտանիքներուն որոնք անկարող են մանուկի խնամքի վճարները ապահովել: Գիտնալու համար եթէ դուք իրաւունք ունիք եւ ինչպէս դիմել, խօսեցէք ձեր հաստատման խորհրդատուին հետ կամ այցելեցէք Ministry of Education edu.gov.on.ca կամ findlink.at/payingchc

ՕՆԹԱՐԻՈՅԻ ՓՈՔԻ ՏԱՐԻՔՆԵՐՈՒ ԿԵԴՐՈՆՆԵՐ

Օնթարիոյի մէջ կառավարութեան կողմէ ֆինանսատրուած փոքր տարիքներու կեդրոններուն մէջ մանուկները մինջեւ վեց տարեկան կարող են խաղալ եւ սորվիլ: Ծնողքը կամ խնամակալը պէտք է յաճախէ մանուկին հետ: Այս կեդրոնները նաեւ կը ներկայացնեն շատ ծառայութիւններ ծնողներու համար, վճարում չկայ յաճախելու:

Գտնելու ձեզի մօտ Ontario Early Years Centre, գտնեցէք ServiceOntario 1-800-268-1153, կամ այցելեցէք oeyc.edu.gov.on.ca

Մտածելու կէտեր

Ի՞նչ հարցումներ պէտք է հարցնեմ երբ հարցազրոյցեմ մանուկի խնամք տուողի մը հետ:

Իմ մանուկիս խնամք տուողը ճկուն ժամեր ունի՞:

Այն օրերը որ գաւակս բացակայ է, ստիպուած եմ վճարել:

Ի՞նչ կը պատահի եթէ ես ուշանամ իմ գաւակս վերցնելու:



ՏԱՐՐԱԿԱՆ և ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ

Ձեր զուակը կարող է անվճար հանրային դպրոց յաճախել: Հանրային դպրոցները կը բաղկանան երկու մասերէ: տարրական (կրտսեր մանկապարտեզէն մինջեւ ութերորդ դասարան) եւ երկրորդական (9 – 12 դասարան): Ձեր զուակը կարող է նաեւ անձնական դպրոց յաճախել որտեղ դուք կը վճարէք ուսումնավարձք: Անձնական դպրոցները, որոնք կը ներկայացնեն դասընթացքներ Օնթարիոյի միջնակարգ վկայականին համար, կը գնուին Ontario Ministry of Education-ի կողմէ:

ՏԱՐՐԱԿԱՆ և ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Մանուկներու մեծ մասը կը սկսին դպրոց յաճախել մանկապարտեզի դասարանէ մը, երբ իրենք չորս կամ հինգ տարեկան են: Օնթարիոյի օրէնքին համեմատ, մանուկները 6-18 տարեկան պարտաւոր են դպրոց յաճախել:

Երկրորդական դպրոցները կը պատրաստեն աշակերտներ յետ-երկրորդական ուսման համար (վարժարան, համալսարան եւ աշկերտութիւն) կամ ծրագիրներ կը ներկայացնեն, օրինակ գիտարուեստական վարժեցում, որպէսզի աշխատանքի պատրաստեն ուսանողները աւարտելէ ողակի վերջ:

Մանուկները պէտք է արձանագրուին իրենց տեղական դպրոցներուն կամ դպրոցական խորհուրդներուն մէջ: Ընդհանրապէս մանուկները կը յաճախեն այն դպրոցները որտեղ կ'ապրին:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Օնթարիոյի իւրաքանչիւր համայնք կը սպասարկուի մէկ կամ աւելի հանրային ֆինանսաւորուած դպրոցական խորհուրդներու կամ իշխանութիւններու կողմէ: Կան անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներու դպրոցական խորհուրդներ զաւառին մէջ: Տարածքներուն մեծ մասը նաեւ ունին հանրային ֆինանսաւորուած կաթողիկէ դպրոցական խորհուրդ:

Աւելի ընտելացէք դպրոցական խորհուրդներու կամ իշխանութիւններու հետ որ կը կառավարեն դպրոցները ձեր շրջանին մէջ: Անոնք կը ներկայացնեն բազմաթիւ ձեւեր, ձեր մասնակցման համար, ձեր մանուկին դպրոցին և ձեր համայնքին մէջ:

ԱՇԿԵՐՏՆԵՐ ԱՆԴԱՄԱԳՐԵԼ

Ձեր մանուկները դպրոց արձանագրելու համար, առաջին անգամ ըլլալով, պէտք է ձեր տեղական դպրոցական խորհուրդին հետ կապ պահէք: Ձեր մանուկները պիտի քննուին գիտնալու որմէկ մակարդակի պիտի տեղադրուին եւ եթէ անոնք լրացուցիչ աջակցութեան կարիք ունին, ինչպէս անգլերէն կամ ֆրանսերէն լեզուներու դասընթացքներ:

 findlink.at/EducationInCanada

Ministry of Education

Օնթարիոյի հանրային դպրոցներու մասին հետազոտումը սկսեցէք այցելելով Ministry of Education: edu.gov.on.ca

Settlement.org

Կարողացէք ուղեցոյցեր տարրական եւ երկրորդական դպրոցական ուսման մասին settlement.org կամ findlink.at/educinfo

Տեղական դպրոցական խորհուրդներ

Օնթարիոյի մէջ բոլոր դպրոցական խորհուրդներու եւ վարչական մարմիններու ցուցակի մը համար, այցելեցէք edu.gov.on.ca կամ findlink.at/boardlist

Ֆրանսերէն լեզուի ուսում

Ֆրանսերէն լեզուի ուսումը կը տրուի 12 դպրոցական խորհուրդներու կողմէ, այն մանուկներուն որոնց ծնողները բնիկ ֆրանսախօս են: Աւելի գիտնալու համար այցելեցէք edu.gov.on.ca կամ findlink.at/fs1





Մտածելու կետեր

Ո՞ր թուականին պետք է որ զառկս արձանագրեմ յաջորդ տարուայ դպրոցական տարեշրջանին:

Իմ մանուկներս քննուա՞ծ եւ տեղադրուա՞ծ են իրենց յարմար մակարդակով դասարանի մը մէջ:

Մանուկս ինչպէ՞ս պիտի հասնի դպրոց, պասսի ծառայութիւն կա՞յ:

Եթէ իմ մանուկս ունի յատուկ կարիքներ, ինչպիսի՞ աջակցութիւններ կը ներկայացնեն տեղական դպրոցները եւ դպրոցական խորհուրդները:

Իմ դպրոցական խորհուրդս կը ներկայացնէ՞ *French immersion*: Ինչպէ՞ս պետք է դիմեմ:

ԼԵԶՈՒԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անգլերէն – Կարգ մը ուսանողներ կը սկսին անգլերէն սորվիլ, առաջին անգամ ըլլալով, երբ տարրական կամ երկրորդական դպրոց յաճախեն: Լեզուական օգնականներ ձեռնտու են այն աշակերտներուն, որոնց առաջին լեզուն անգլերէն չէ:

Ֆրանսերէն- Ֆրանսերէնը իբր երկրորդ լեզու (FSL) ծրագիրները ձեռնտու են անգլերէն-լեզուով դպրոցական խորհուրդներու մէջի բոլոր աշակերտներուն: Ծրագիրները կը ներառեն հետեւեալը:–

- Core French (Հիմնական Ֆրանսերէն) – աշակերտները կը սորվին ֆրանսերէնը որպէս դպրոցական նիւթ:
- Extended French (Ընդլայնուած Ֆրանսերէն) – աշակերտները կը սորվին ֆրանսերէնը որպէս դպրոցական նիւթ եւ ֆրանսերէնը ուսումի լեզուն է առնուազն մէկ ուրիշ դպրոցական նիւթի: Այս ծրագիրները սովորաբար կը սկսին 7-երորդ դասարանէն:
- French immersion (Խորացուած Ֆրանսերէն) – աշակերտները կը սորվին ֆրանսերէնը որպէս դպրոցական նիւթ եւ ֆրանսերէնը լեզուն է երկու կամ աւելի ուրիշ դպրոցական նիւթերու: French immersion ծրագիրները սովորաբար կը սկսին մանկապարտէզէն:

Տեղեկացէք աւելի (FSL) ծրագիրներու մասին Ministry of Education: edu.gov.on.ca կամ findlink.at/onfsl

French immersion եւ extended French ծրագիրները ձեռնտու չեն բոլոր հանրային դպրոցներուն մէջ: Գտնելու այն դպրոցները որոնք ունին այս ծրագիրները ձեր շրջանին մէջ, կապ պահեցէք ձեր տեղական դպրոցական խորհուրդին կամ վարչական մարմնին հետ:

Ժառանգական լեզուի ծրագիրներ

Այս ծրագիրները կը ներկայացնեն տեղեկութիւններ եւ գործունէութիւններ շատ մը լեզուներով եւ տարբեր տարիքներու համար: Սովորաբար տեղի կ'ունենան դպրոցի ժամերէն դուրս: Հարցուցէք ձեր տեղական դպրոցին, դպրոցական խորհուրդին կամ դպրոցական վարչական մարմնին, որպէսզի գիտնաք այն ընտրութիւնները որոնք ձեռնտու են ձեր շրջանին մէջ:

ԼՍԱՆ-ՕՐՈՒԱՅ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋ

Շատ մը Օնթարիոյի դպրոցները կը ներկայացնեն լման օրուայ մանկապարտէզ, չորս եւ հինգ տարեկան մանուկներու համար: Սեպտեմբեր 2014-ին բոլոր հանրային դպրոցները կը ներկայացնեն այս ծառայութիւնը:

Երբ բաւարար հետազոտութիւն կայ ծնողներու կողմէն, դպրոցները նաեւ կը ներկայացնեն ծրագիրներ որոնք տեղի կ'ունենան դպրոցէն առաջ եւ վերջ, առաւօտեան 7:00-էն 9:00 եւ կէսօրէ վերջ 3:30-էն 6:00: Այս ծրագիրները ընդհանրապէս լման օրուայ մանկապարտէզի աշակերտներու համար են եւ յարմար գիներ ունին:

Աւելի գիտցէք լման օրուայ մանկապարտէզի եւ դպրոցէն առաջ եւ վերջուայ ծրագիրներուն մասին, այցելելով Ministry of Education: edu.gov.on.ca կամ findlink.at/full-dayk

ՅԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ

Ծրագիրները եւ աջակցութիւնները ձեռնտու են այն մանուկներուն որոնք ունին վարուելակերպի, հաղորդակցութեան, մտաւորական եւ/կամ ֆիզիքական կարիքներ, իրենց օգնելու որպէսզի լռիւ ձեռով օգտուին իրենց դպրոցական փորձառութենէն:

Կարդացէք այս ծրագիրներուն մասին այցելելով Ministry of Education: edu.gov.on.ca կամ findlink.at/speceduc

ՅԵՏ-ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ

Ուսանողները Օնթարիոյի մէջ կը հետեւին իրենց երկրորդական ուսման կամ աշկերտութիւններու, վարժարաններու կամ համալսարաններու մէջ: Համալսարանները եւ վարժարանները նաեւ կը ներկայացնեն տեսակաւոր յետ-երկրորդական ուսման վկայականներ միջազգայինօրէն ուսեալ անձերուն որոնք արդէն ունին յետ-երկրորդական երաշխաւորագրեր:

ՎԱՐՇԱՐԱՆՆԵՐ

Օնթարիոյի վարժարանները կը ներկայացնեն գործի վերաբերեալ ծրագիրներ, որոնք կը պատրաստեն աշակերտները գտնելու գործեր, զանազան ասպարեզներու մէջ, ներառեալ արուեստագիտութիւն, առողջութիւն, առեւտուր, հիւրասիրութիւն և զբօսաշրջութիւն: Վարժարանները կը ներկայացնեն վկայագրի եւ վկայականի ծրագիրներ, նաեւ աշկերտութիւններ (եւ կարգ մը վկայականներու ծրագիրներ, ուսման գործնական ասպարեզներու մէջ):

Սովորաբար վարժարանի վկայագրի ծրագիր մը կը պահանջէ ուսման մէկ տարի մը, կամ նոյնիսկ աւելի քիչ: Վարժարանի վկայականի ծրագիր մը սովորաբար կը պահանջէ երկու կամ երեք տարուայ լման ժամանակի ուսում:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

Համալսարաններու մէջ ուսանողները կը հետեւին նախա-աւարտեալ ծրագիրներու (bachelor's degree) եւ աւարտելու ծրագիրներու (master's and Ph.D. degrees): Համալսարանները կը ներկայացնեն արուեստներու եւ գիտութիւններու ծրագիրներ, նաեւ ծրագիրներ յատուկ մասնագիտութիւններու համար, ինչպէս կրթութիւն, բժշկութիւն, իրաւագիտութիւն և ճարտարագիտութիւն:

Ընդհանրապէս համալսարանները եւ վարժարանները կը պահանջեն դիմողներէն ունենալ երկրորդական դպրոցի վկայականներ կամ ինչ որ կը համապատասխանէ անոնց: Ամէնայն դէպս եթէ դուք չ'աւարտեցիք երկրորդական դպրոցը կրնաք դիմել իբր չափահաս աշակերտ եթէ դուք 19 տարեկան կամ աւելի էք եւ եթէ Գանատացի քաղաքացի էք կամ ներգաղթող էք:

Համալսարանի եւ վարժարանի օրացոյցները կը ներկայացնեն տեղեկութիւններ իրենց ծրագիրներուն եւ մուտքի պահանջներուն մասին: Եթէ դուք Գանատայէ դուրս ուսանած էք, պէտք պիտի ունենաք ձեր ուսման փաստաթուղթերը որակելու: Իւրաքանչիւր դպրոց ունի իր սեփական որակելու չափանիշերը և ընթացակարգերը: Եթէ դուք աւարտած էք ձեր ուսումը Գանատայէն դուրս, իրաւունք կ'ունենաք յառաջացած դիմքի, որոշ դասընթացներ չ'ընելու կամ ուրիշ գնահատանքներու ձեր նախորդ ուսման համար: Կապ պահեցէք մուտքի գրասենեակին հետ աւելի գիտնալու գնահատանքի եւ որակելու մասին:

ՖԵՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Յետ-երկրորդական ուսման ծրագիրներու ուսումնաւարձքերը կը փոխուին նայած այն ծրագրին որ կ'ընտրէք: Յետ-երկրորդական ուսանողներու ֆինանսական օգնութեան գլխաւոր աղբիւրը Ontario Student Assistance Program (OSAP)-ն է: Ֆետերալ կառավարութիւնը նաեւ կ'ապահովէ որոշ հիմնադրամներ Canada Student Loans ծրագրին միջոցաւ:

Իւրաքանչիւր վարժարան եւ համալսարան ունի իր յատուկ պիւնտէները կամ կրթաթոշակները որ կ'օգնեն կարգ մը աշակերտներու անվճար ուսանելու: Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէք վարժարանին կամ համալսարանին ուեյ սայթը, կամ զանգեցէք իր ֆինանսական օգնութեան գրասենեակը:

ԱՇԿԵՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշկերտը անձ մըն է որ արհեստը գործնական ձեւով կը սորվի աւելի փորձառու գործաւորներու ուղղութեամբ: Աշկերտները կ'ամբողջացնեն մաս մը իրենց ուսուցումէն դասարանին մէջ: Իբր աշկերտ, դուք գործաւոր էք, եւ պիտի ստանաք աշխատավարձ, միեւնոյն ատեն երբ կը սորվիք արհեստը: Աւելի քան հարիւր հիսուն արհեստներ կարող էք սորվիլ աշկերտութեան միջոցաւ: Տեսէք աղբիւրները էջին ծայրը:

ԱՐՑԱՆԱԳՐՈՒՄ ՈՒՍՄԱՆ ԽԱՅՅՈՒՄՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐՆԵՐ (RESPS)

Կարող էք ձեր մանուկին վարժարանի կամ համալսարանի ուսման դրամ խնայել բանալով քիչ տուրքով արցանագրուած ուսման խնայումներու ծրագիր (RESP) մը դրամատան, դրամական միութեան (credit union) կամ ընդհանուր ֆինանսաւորումի ընկերութեան (mutual fund company) մը մէջ: Յաւելեալ տեղեկութիւններու համար, այցելեցէք Human Resources և Skills Development Canada: www.hrsdc.gc.ca կամ findlink.at/can-resp

Օնթարիոյի վարժարաններ և համալսարաններ

Գտէք Օնթարիոյի վարժարանները և համալսարանները:- www.tcu.gov.on.ca կամ findlink.at/findschool

Ֆրանսերէն լեզուի վարժարաններ և համալսարաններ

Գիտցէք Օնթարիոյի ֆրանսերէն լեզուի վարժարաններուն և համալսարաններուն մասին:- www.tcu.gov.on.ca կամ findlink.at/frenschool

Ֆինանսական օգնութիւն ուսանողներու համար

Գիտցէք եթէ դուք OSAP-ի իրաւունք ունիք:- www.osap.gov.on.ca : Կարդացէք Canada Student Loans Program ծրագրին մասին:- canlearn.ca

Աշկերտութեան ծրագիրներ

Այցելեցէք Ministry of Training, Colleges and Universities:- www.tcu.gov.on.ca կամ findlink.at/trades



ՈՒՍՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ

Վարժարանները, համալսարանները եւ դպրոցական խորհուրդները կը ներկայացնեն ուսումը շարունակելու գանազան ծրագիրներ, յաճախ տեղի կ'ունենան երեկոները և շաբաթավերջերը:

ՈՒՍՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ

Մարդիկ կը յաճախեն ուսում շարունակելու դասընթացներ վկայական ստանալէ ետք որպէսզի զարգացնեն իրենց անձնական զբաղումները, օրինակ այգեգործութիւն կամ լուսանկարչութիւն, կամ որպէսզի հասնին իրենց գործի վերաբերեալ նպատակներուն: Այս կարող է լաւ ուսման փորձառութիւն մը ըլլայ որ պիտի օգնէ ձեզի ծանօթանալու մարդոց ձեր համայնքին մէջ:

Ուսում շարունակելու դասընթացներու մասին տեղեկութեան համար, այցելեցէք վարժարաններու, համալսարաններու եւ դպրոցական խորհուրդներու ուէպ սայթները:

- Ձեր տեղական դպրոցական խորհուրդը գտնելու համար, բացէք կապոյտ էջերը (Blue Pages) ձեր հեռաձայնի գիրքին մէջ կամ այցելեցէք edu.gov.on.ca կամ findlink.at/schoolinfo
- Գտէք Օնթարիոյի վարժարաններն ու համալսարանները այցելելով Ministry of Training, Colleges and Universities (MTCU):- www.tcu.gov.on.ca կամ findlink.at/findschool
- Ուսում շարունակելու դասընթացները նաեւ ձեռնտու են չափահասներու համար որոնք կ'ուզեն զարգացնել իրենց ընթերցանութեան, գրելու և թուաբանութեան հմտութիւնները: Այցելեցէք MTCU ուէպ սայթը կարդալու համար այս ծրագիրներուն մասին www.tcu.gov.on.ca կամ findlink.at/adultlearn

ՍՏԱՆԱԼ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԿԱՅԱԿԱՆ ԻԲՐ ՉԱՓԱՀԱՍ

Եթէ դուք 18 տարեկանէն վեր էք եւ կ'ուզէք ստանալ երկրորդական դպրոցի վկայական, ձեռնտու են բազմաթիւ անվճար ծրագիրներ:

- Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէք Ministry of Education edu.gov.on.ca կամ findlink.at/ossd
- Independent Learning Centre կը ներկայացնէ շատ մը երկրորդական դպրոցի դասընթացներ, որ կարող էք ամբողջացնել առգիծ (online): ilc.org



ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Անգլերեն կամ ֆրանսերեն սորվիլը կարելու մաս մըն է Գանատա հաստատուելու: Հմուտ ըլլալը Գանատայի պաշտօնական մէկ կամ երկու լեզուներուն օգտակար է ձեր կեանքի բոլոր ասպարեզներուն մէջ:

ԼԵԶՈՒՄԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Ֆետերալ եւ գաւառական կառավարութիւնները կ'ապահովեն ֆինանսատրուքը դպրոցական խորհուրդներու, վարժարաններու եւ համայնքի գործակալութիւններու, այնպէս որ անոնք կարելիութիւն կ'ունենան ներկայացնելու անգլերեն եւ ֆրանսերեն անվճար դասընթացներ:

Վարժարանները, համալսարանները եւ անձնական լեզուի դպրոցները նաեւ կը ներկայացնեն վարձքով լեզուի դասընթացներ:

Կան շատ մը տարբեր տեսակի անգլերենի եւ ֆրանսերենի դասընթացներ որոնք ձեռնտու են Օնթարիոյի մէջ, ներառեալ:

- English Literacy Development (ELD)
- English and French as a Second Language (ESL and FSL)
- Language Instruction for Newcomers to Canada (LINC)
- Cours de langue pour les immigrants au Canada (CLIC)
- Occupation-specific Language Training (OSLT)
- Enhanced Language Training (ELT)
- Specialized Language Training (SLT)

ԼԵԶՈՒԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախքան ձեր արձանագրութիւնը լեզուական ծրագրի մը, պէտք է չափանշել ձեր լեզուական հմտութիւնները: Խնդրեցէք ձեր հաստատման խորհրդատունէն ձեզ ուղղելու գնահատման կեդրոն մը ձեր շրջանին մէջ կամ այցելեցէք:-

cic.gc.ca/english/newcomers/map/ontario.asp :

Օնթարիոյի որոշ տարածքներու մէջ, կարող էք ընտրել ձեր անգլերեն կամ ֆրանսերեն լեզուներու հմտութեան գնահատումը:

Լեզուի գնահատում

Աւելի գիտնալու լեզուի գնահատման մասին, այցելեցէք: www.language.ca կամ findlink.at/clb-assess

Լեզուական դասընթացներ

Տարբեր լեզուական դասընթացներու տեսակներու մասին որոնք ձեռնտու են այցելեցէք inmylanguage.org կամ findlink.at/eslprogram

Գիտնալ ուր կը գտնուին լեզուական դասընթացներ


Գտնելու համար լեզուական դասընթաց մը ձեր շրջանին մէջ, այցելեցէք Ontario Immigration:- ontarioimmigration.ca կամ findlink.at/onlineetool: Կարող էք նաեւ գտնել 2/7 կամ այցելել- 21ontario.ca

Լեզուի ցուցմունք Գանատա նոր եկողներու համար - տան մէջ սորվիլ (Language Instruction for Newcomers to Canada Home Study (LINC))

Գիտնալու համար (LINC) վարժեցման մասին որ կրնաք տունը սորվիլ, այցելեցէք tcet.com կամ findlink.at/homestudy

Գործի-յատուկ լեզուի ուսուցում (Occupation-specific Language Training (OSLT))

(OSLT) կը ներկայացնէ անվճար դասապահեր Օնթարիոյի վարժարաններէն ներս, յատուկ գործերու հաղորդակցութեան հմտութիւններ ունենալու: Աւելի կարդացէք co-oslt.org



ՀԱՍՏԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄԱՆՈՒԿԻ ԽՆԱՄՔ

☐ Մանուկի խնամքի դասաւորութիւններ ընել:

1. Պարտականութիւն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականութիւն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականութիւն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ՏԱՐԲԱԿԱՆ և ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ

- ☐ Գիտնալ որ դպրոցը կամ դպրոցները ձեր մանուկները պիտի յաճախեն:
- ☐ Գիտնալ ձեր մանուկներուն դպրոցի արձանագրութեան ժամկէտը:
- ☐ Ապահովել ձեր մանուկներուն յարմար դպրոցական երթեւեկի փոխադրում:

☐ Ունենալ բոլոր փաստաթուղթերը որ պէտք պիտի ունենաք ձեր մանուկները դպրոց արձանագրելու:-

- Տարիքի փաստաթուղթ
- Հասցէի փաստաթուղթ
- Խնամակալութեան փաստաթուղթ
- Ախտագրութեան հերթագրում

1. Պարտականութիւն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականութիւն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականութիւն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ՅԵՏ-ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ

☐ Գիտնալ վարժարանին կամ համալսարանին դիմելու ժամկետերը ձեր կամ ձեր մանուկներուն համար:

☐ Գիտնալ ընդհանուր մուտքի պահանջները:
☐ Դիմել ձեռնտու ֆինանսական աջակցության:

1. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկության աղբիւրներ

2. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկության աղբիւրներ

3. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկության աղբիւրներ

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՈՒՍՈՒՄԸ

☐ Գիտնալ վարժարաններու, համալսարաններու կամ դպրոցական խորհուրդներու մէջ ուսումը շարունակելու դասընթացներու մասին որ կապ ունին ձեր նախասիրութիւններուն կամ զբաղման հետ:

1. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկության աղբիւրներ

2. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկության աղբիւրներ

3. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկության աղբիւրներ

ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

☐ Ձեր լեզուի հմտությունները չափանշել:

☐ Որոշել լեզուական ծրագիրը որ ամենալավ ձևով
յարմար է ձեր կարիքներուն:

☐ Խօսիլ խորհրդատուի մը հետ գիտնալու ձեր
աշխատանքի իրայատուկ լեզուի ուսուցման մասին:

1. Պարտականություն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականություն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականություն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ԱՇԽԱՏԻԼ ԵՒ ԳՈՐԾ

Այս բաժինը կ'ապահովե տեղեկություններ որպեսզի հասկնաք և մտնեք Օնթարիոյի աշխատաշուկան: Պիտի գիտնաք ինչպէս պատրաստուիլ Օնթարիոյի մեջ աշխատելու, ճանաչում ստանալ ձեր միջազգային վարժեցման եւ գործի փորձառութեան համար, գործ փնտռել եւ սկսիլ ձեր սեփական գործը:

40

Պատրաստուիլ
աշխատանքի

42

Գործ փնտռել

44

Աշխատատեղի
իրաւունքներ

46

Սկսիլ ձեր
սեփական գործը

47

Հաստատման ծրագիր





ՊԱՏՐԱՍՏՈՒԻԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Դիմել ձեր SIN-ին

Գիտնալու ինչպես դիմել ձեր SIN-ին, այցելեցեք Service Canada www.servicecanada.gc.ca կամ findlink.at/sin

Երաշխավորագրի գնահատում

Այցելեցեք Canadian Information Centre for International Credentials-ը: cicic.ca կամ findlink.at/cicic-cred կամ Foreign Credentials Referral Office: credentials.gc.ca

Global Experience Ontario

Կարգավորում և աշխատանքներու մասին Օնթարիոյի մէջ գիտնալու համար, զանգեցեք 1-866-670-4094 կամ այցելեցեք ontario.ca կամ findlink.at/globalexpe

HealthForce Ontario

Եթէ միջազգային օրէն ուսեալ առողջութեան մասնագէտ էք, հեռաձայնեցեք 1-800-596-4046 կամ այցելեցեք healthforceontario.ca

Bridging Programs Կամրջելու ծրագիրներ

Կամրջելու ծրագիրներու մասին տեղեկութեան համար, խօսեցեք ձեր հաստատման խորհրդատուին հետ կամ այցելեցեք www.citizenship.gov.on.ca կամ findlink.at/training

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԻԻ (SIN)

Նախքան կարենալը Գանատայի մէջ աշխատիլ, պէտք է ունենաք հասարակական ապահովագրութեան թիւ (յաճախ կը կոչուի SIN): Երբ աշխատանք գտնէք, ձեր գործատուն պիտի խնդրէ ձեր SIN-ը ամբողջացնելու ձեր ընդունուելու գործողութիւնը: Նաեւ պիտի օգտագործէք այս թիւը ձեր տուրքի թուղթերը լեցնելու եւ դիմելու կարգ մը կառավարական ծառայութիւններու: Պէտք է ձեր SIN-ը պահելք անձնական եւ պահպանուած:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՈՒՍՄԱՆ

ԵՐԱՇԽԱՆՈՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կարելոր է գիտնալ նախ եւ առաջ եթէ կարիք ունիք ձեր արտասահմանեան ուսման երաշխավորագրերը գնահատելու, կարգ մը ինքնակարգավորում կամ չկարգավորում աշխատանքներու համար անհրաժեշտ չէ, այդ կախում ունի գործատուին որոշումէն:

Եթէ գնահատումի կարիք ունիք որովհետեւ ձեր աշխատանքը ունի իւրայատուկ ուսումնական պահանջներ, այն ատեն ձեր երաշխավորագրերը պիտի համապատասխան ըլլան Գանատական ուսման հետ: Այս ձեզի պիտի յայտնէ եթէ կարիք ունիք յաւելեալ վարժեցման կամ ուսման, ձեր ցանկացած աշխատանքը գտնելու Օնթարիոյի մէջ: Տեսեք աղբիւրները էջին կողմը:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՕՆԹԱՐԻՈՅԻ ՄԷՋ

Կան շատ տարբեր աշխատանքներ, մասնագիտութիւններ եւ արհեստներ Օնթարիոյի մէջ: Կան կարգավորում, չկարգավորում կամ ինքնակարգավորում:

ՉԿԱՐԳԱՆՈՐԱՍ ԿԱՍ

ԻՆՔՆԱԿԱՐԳԱՆՈՐՈՒՄՍ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հատ մը մասնագիտութիւններ եւ արհեստներ չեն պահանջեր ձեզմէ յատուկ արտօնագիր կամ վկայագիր, Օնթարիոյի մէջ աշխատելու համար. ասոնք **կը կոչուին չկարգավորում** աշխատանքներ: Չկարգավորում աշխատանքները կը ներառեն ֆինանսական ղեկավարներ, տնտեսագէտներ, համակարգիչի ծրագրավորողներ, հաշուապահներ, կանոններ վերլուծողներ, ընդհանուր ատաղձագործներ, խոհարարներ և ուրիշ աշխատանքներ:

Կարգ մը աշխատանքներ վկայագրում չեն պահանջեր Օնթարիոյի մէջ աշխատելու համար, բայց ձեռնտու է: Ասոնք կը կոչուին **ինքնակարգավորում աշխատանքներ**, օրինակ մարդկային աղբիւրներու խորհրդատու:

ԿԱՐԳԱԻՈՐՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Շատ մասնագիտություններ եւ արհեստներ Օնթարիոյի մէջ, ներառեալ հասարակական աշխատանք, հիւանդապահութիւն, ելեկդրական արհեստներ և ջրմուղային աշխատանք, կը պահանջեն արձանագրուած կամ արտօնագրուած ըլլալ կանոնակարգող մարմնի մը կողմէ: Ասոնք կը կոչուին **կանոնակարգուած աշխատանքներ:**

Եթէ կը ցանկանաք կանոնակարգուած աշխատանքի մը մէջ աշխատիլ, կարիք պիտի ունենաք հետազօտել այն աշխատանքին կանոնակարգող մարմինը Օնթարիոյի մէջ, գիտնալու ինչ պէտք է ընել ստանալու արտօնագիր կամ արձանագրուելու համար:

Global Experience Ontario (GEO) մուտքի կէդրոն մըն է որ կը ներկայացնէ անվճար տեղեկություն և օգնություն, միջազգայինօրէն մարգում նոր եկողներուն, որոնք կը փափաքին ոչ-առողջութեան աշխատանքներու եւ արհեստներու մէջ աշխատիլ: Առողջութեան աշխատանքներու համար, HealthForceOntario-ն գլխաւոր գործակալութիւնն է միջազգայինօրէն ուսեալ առողջութեան մասնագէտներու:

ԿԱՍՐՁԵԼՈՒ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Օնթարիոյի կամուրջ ուսուցման ծրագիրները կ'օգնեն ձեզի պատրաստուելու ձեր աշխատանքին, ձեզի ներկայացնելով ուսուցում, ձեր հմտութիւններու զարգացում, ասպարէզի առանձնայատուկ աշխատանք փնտռելու օգնություն եւ աշխատելու աջակցություն: Որոշ կամուրջ ուսուցման ծրագիրները ձեզ կը պատրաստեն ստանալու արտօնագիր որպէսզի աշխատիք կանոնակարգուած աշխատանքի մը մէջ: Ուրիշները կ'ապահովեն ձեզի Օնթարիոյի մէջ աշխատանքի հնարաւորութիւններ, ձեր մասնագիտութեան համեմատ, գործի մէջ տեղաւորելով, խրատ տալով և կապակցութիւն ապահովելով աշխատուիներու հետ: Տեսէք աղբիւրները դիմացի էջին վրայ:

Մտածելու կէտեր

Իմ նախաձիրած աշխատանքս կարգաւորուած թէ չկարգաւորուած է:

Եթէ կարգաւորուած է, ի՞նչ պէտք է ընեմ ստանալու համար արտօնագիր:

Ես ունի՞մ բոլոր փաստաթուղթերը, որոնց կարիքը ունիմ, իմ երաշխաւորագրերս գնահատելու համար: Որո՞նք են պէտք է կապ պահեմ ստանալու համար որեւէ պակաս փաստաթուղթ:

Իմ աշխատանքս կը պահանջէ՞ ապացոյց որոշ ուսման մակարդակի մը համար: Այն կը պահանջէ՞ յատուկ ուսման ասպարէզ մը:

Ես ունի՞մ անհրաժեշտ ուսումնական երաշխաւորագրերս:

ԳՈՐԾ ՓՆՏՈՒԵԼ

Ձեր ցանկացած գործը փնտռելը կը պահանջէ ժամանակ եւ ծրագրաւորում: Գործ փնտռելը Օնթարիոյի մէջ կարող է ներկայացնել նոր ընդիմութիւններ: Ամփոփագրերը (Résumé) տարբեր կերպով կը ներկայացուին, և կապ պահելը յաճախ կարեւոր մաս մըն է ձեր գործ փնտռելուն: Բազմազան գործակալութիւններ և աջակցութիւններ ձեռնառու են ձեզ օգնելու:

Մտածելու կէտեր

Յաւելեալ ուսուցման պէտքերիւն ունի՞մ աշխատանքի-ատանձնայատուկ հաղորդակցութեան հմտութիւններու մէջ որպէսզի յաջողիմ գործիս մէջ:

Ու՞ր կարող եմ ստանալ կարծիքներ փորձագէտերէ, իմ ամփոփագրիս (résumé) եւ դիմելու նամակներուս մասին, եւ ուրիշ աջակցութիւն աշխատանք փնտռելու:

Ու՞ր կարող եմ երթալ հանդիպելու իմ ասպարէզիս մէջ աշխատող մարդոց հետ:

Ի՞նչ է իմ նախընտրած աշխատանքիս միջին աշխատավարձը Օնթարիոյի մէջ:

Ի՞նչ են վերջին կարեւոր փոփոխութիւնները Օնթարիոյի մէջ իմ նախընտրած արդիւնաբերութեան եւ աշխատանքի վերաբերեալ:

ԳՈՐԾ ՓՆՏՈՒԵԼՈՒ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կան շատ ծրագիրներ եւ ուէպ սայթեր օգնելու համար նոր եկողներուն զիտնալու աշխատաշուկային մասին և Օնթարիոյի մէջ գործ գտնելու: Կարող էք սկսիլ ձեր ուսումնասիրութիւնը յետեւեալ որեւէ մէկ ձեռքով:

- Գիտցէք Օնթարիոյի աշխատաշուկային մասին: ontario.ca կամ findlink.at/imi
- Գործ փնտռելու օգնական տեղեկութեան եւ խորհուրդներու, հեռաձայնեցէք Employment Ontario Contact Centre 1-800-387-5656 կամ այցելեցէք Employment Ontario ontario.ca կամ findlink.at/etlanding
- Գիտնալու համար թէ ինչպէս Employment Ontario ծառայութեան մատակարար մը կարող է ձեզ օգնել, այցելեցէք: ontario.ca կամ findlink.at/ineedajob
- Հետազօտեցէք “Աշխատիլ Գանատայի մէջ” “Working in Canada”, որը միջոց մըն է մշակուած Գանատայի կառավարութեան կողմէ: workingincanada.gc.ca
- Կարդացէք գործ փնտռելու յօդուածներ: settlement.org կամ findlink.at/employInfo

- Մտէք Service Canada տուեալներու հենքը (database), ձեռնառու գործերու համար Օնթարիոյի և Գանատայի մէջ առցանց (online): jobbank.gc.ca

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ ՄԻԱՆԱԼ

Կամաւորութիւնը կարող է լաւ ձեւ մը ըլլալ միանալու Գանատական բանուորական ուժին: Զանգեցէք 211 եւ հարցուցէք ուր կը գտնուի ձեր տեղական կամաւորի կեդրոնը, կամ այցելեցէք Ontario Volunteer Centre Network: ovcn.ca

Career Edge-ը կ'ապահովէ ուսուցումներ հմուտ ներգաղթողներուն, բազմազան չկարգաւորուած ասպարէզներու մէջ, ինչպէս գործի կառավարում, քիմիագիտութիւն, հաղորդակցութիւն, բնապահպանման ուսումներ եւ ֆինանս: Յաւելեալ տեղեկութիւններու և դիմելու համար, զանգեցէք 1-888-507-3343 կամ այցելեցէք careeredge.ca



ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՄԵԼ

Ընդհանրապես կը դիմէք աշխատանքի ղրկելով ամփոփագիր (résumé) - (նաեւ ճանչցուած է իբր “աշխատանքային ինքնակենսագրութիւն” կամ CV) և դիմելու նամակ: Ամփոփագիրը ցուցակ մըն է ձեր որակաւորումներուն և աշխատանքի փորձառութեան: Դիմելու նամակը կը նկարագրէ կարճ ձեռով այն ինչ որ ձեզ կը վերածէ ուժեղ թեկնածու մը դիրքին համար:

Որոշ գործատուեր անվստահ պիտի ըլլան ձեր նախկին փորձառութեան արժէքէն ուրիշ երկրի մը մէջ: Վստահ եղէք թէ ձեր ամփոփագիրը եւ դիմելու նամակը ցոյց կու տան ինչպէս ձեր նախորդ գործի փորձառութիւնը օգուտ պիտի ունենայ Օնթարիոյի աշխատուի մը: Կարող էք գտնել տեղեկութիւն մշակելու ամփոփագրեր եւ դիմելու նամակներ, նաեւ ինչպէս պատրաստուիլ գործի հարցազրոյցներու, workingincanada.gc.ca և jobbank.gc.ca

 EmploymentInCanada

ՕՆԹԱՐԻՈՅԻ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՄԵԱԿՈՑԹԸ

Աշխատատեղի մշակոյթը կարող է տարբերիլ երկրէ-երկիր, և նոյնիսկ աշխատանքէ աշխատանք: Ընդհանրապէս Օնթարիոյի գործատուերը շատ կարեւորութիւն կու տան հաղորդակցական հմտութիւններու: Ձեր Տեղական հաստատման գործակալութիւնը և ուրիշ աշխատանքի փորձագէտեր կարող են ձեզի օգնել գիտնալու Օնթարիոյի աշխատատեղի մշակոյթին մասին: Կարգ մը լեզուի ուսուցման դասընթացքներ կը ներառեն աշխատատեղի մշակոյթի և հաղորդակցութեան ուսուցումը:





ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ԻՐԱԽՈՒՆՔՆԵՐ

ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ

(Ontario Human Rights Code) **Օնթարիոյի մարդու իրաւունքներու** օրինագիրը կ'արգիլէ զատողութիւնը աշխատատեղին մէջ: Այն որ կ'աշխատի կամ կը դիմէ աշխատանքի Օնթարիոյի մէջ կարելի չէ հետը վարուիլ անիրաւացիօրէն կամ իրեն նեղութիւն տրուիլ անոր ցեղի, նախնիքներու, ծննդավայրի, գոյնի, էթնիկ ծագումի, քաղաքացիութեան, կրօնքի, տարիքի, սեռի, սեռական կողմնորոշման, յանգանքներու արձանագրի, ամուսնական կարգավիճակի, նոյն սեռի յարաբերութեան կարգավիճակի, ընտանիքի կարգավիճակի կամ հաշմանդամութեան պատճառներով: Յաւելեալ տեղեկութիւններու համար ձեր հաւասար իրաւունքներու և պատասխանատւութիւններուն մասին աշխատատեղին մէջ, այցելեցէք Ontario Human Rights Commission ohrc.on.ca կամ findlink.at/ohrcemploy

ՕՆԹԱՐԻՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Բանուորները Օնթարիոյի մէջ իրաւունքը ունին արդար և ապահով աշխատատեղի: **Օնթարիոյի աշխատանքի չափորոշիչներու օրէնքը** *Employment Standards Act (ESA)* կը ներկայացնէ նուազագոյն չափորոշիչները որոնց աշխատատեղերը և ծառայողները պէտք է որ հետեւին:

ԱՇԽԱՏԱՎԱՐԶՔԵՐ

Օնտարիոյում աշխատողները իրավունք ունեն ստանալ նվազագոյն աշխատավարձ: 2024-2025 թվականների նվազագույն աշխատավարձը կազմում է ժամում 17.60 դոլար, իսկ ուսանողների նվազագույն աշխատավարձը՝ ժամում 16.60 դոլար: (5) Ներկայիս նվազագույն աշխատավարձի

չափը պարզելու համար այցելեք Աշխատանքի նախարարության կայք՝ labour.gov.on.ca կամ findlink.at/minwage

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄՆԵՐ

Ընդհանրապէս ծառայողներէն պահանջուած չէ աւելի քան ութ ժամ օրական և ընդհանուր 48 ժամ շաբթական աշխատանք, քիչ մը բացառութիւններով: Առաւելագոյն ժամերը կարող են աւելնալ գրուած համաձայնութեամբ մը և Օնթարիոյի աշխատանքի տնօրէնութեան չափանիշերու համեմատ Ontario Director of Employment Standards:

ՀԱՆՐԱՅԻՆ ՏՕՆԵՐ

Կան ինը հանրային տարեկան տօներ Օնթարիոյի մէջ: Ծառայողները իրաւունք ունին այս օրերը արձակուրդ առնելու եւ հանրային տօներու վճարում ստանալու: Օնթարիոյի հանրային տօներն են: - Նոր տարուայ օր, ընտանեկան օր, աւագ ուրբաթ, վիքթորիայի օր, Գանատայի օր, աշխատանքի օր, շնորհակալութեան օր, Սուրբ ծնունդ եւ պօքսինկի օր:

ԱՐԶԱԿՈՒՐԴԻ ԺԱՄԱՆԱԿ

Ընդհանրապէս ծառայողները իրաւունք ունին նուազագոյնը երկու շաբթուայ արձակուրդի, իւրաքանչիւր 12 ամսուայ աշխատանքի ընթացքին: Վճարուած արձակուրդի փոխարէն, ծառայողները իրաւունք ունին ստանալու նուազագոյն 4% տոկոսը իրենց ամբողջ աշխատավարձերուն:

⁵ Այս սակը 18 տարեկանէ վար ուսանողներուն համար է, որոնք կ'աշխատին շաբթական 28 ժամ կամ աւելի պակաս դպրոցի առէն, կամ կ'աշխատին դպրոցական արձակուրդի եւ ամրան ընթացքին:

ՄՏԱՆԱԼ ՁԵՐ ՎՃԱՐԸ

Ծառայողները պետք է ստանան վճարը կանոնադր ձևով ամսուայ նոյն վճարելու օրը եւ իրենց կը տրուի ցուցակ մը որուն մէջ նշուած է իրենց աշխատավարձերը եւ զեղջերը այդ վճարում ժամանակամիջոցին համար:

ՄԱՅՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԾՆՈՂԱԿԱՆ ԹՈՅԼՍԻՌՈՒԹԻՒՆ

Աշխատող մայրերը եւ հայրերը ունին իրենց աշխատանքներէն չվճարուած ժամանակաւոր թոյլատուութեան իրաւունք, երբ կը սպասեն կամ ունեցած են նոր մանուկ մը: Աշխատանքի ապահովագրութիւնը Employment Insurance (EI) կ'ապահովէ օգուտներ իրաւունք ունեցող ծնողներուն:

Աւելի գիտնալու համար ձեր իրաւունքներուն եւ պարտականութիւններուն մասին *աշխատանքի չափանիշերու օրէնքին* տակ, զանգեցէք Ministry of Labour-ի Employment Standards Information Centre-ին **1-800-531-5551** (տեղեկութիւնները ներկայացուած են 23 լեզուներով) կամ այցելեցէք Ministry of Labour:- labour.gov.on.ca կամ findlink.at/on-esa: Կարող էք նաեւ այցելել Service Canada կեդրոն մը խօսելու համար ֆետերալ կառավարական աշխատանքային գործերու պաշտօնէայի մը հետ: Նայեցէք ձեր հեռախօսագրքին կապոյտ էջերուն մէջ (Blue Pages) կամ այցելեցէք servicecanada.gc.ca գիտնալու տեղերը:

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ Եւ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

(Ontario Occupational Health and Safety Act) Օնթարիոյի աշխատանքային առողջութեան եւ ապահովութեան օրէնքը կը ներկայացնէ չափանիշեր պահպանելու առողջութիւնը եւ ապահովութիւնը Օնթարիոյի աշխատողներուն: Այն կը գործադրուի Օնթարիոյի մէջ բոլոր աշխատատեղերու եւ գործի ասպարէզներու մէջ, մի քանի բացառութիւններով:

- Կարդացէք ձեր եւ ձեր աշխատուիւն գործի իրաւունքներուն եւ

պարտականութիւններուն մասին առողջութեան եւ ապահովութեան վերաբերեալ (*Worker Health and Safety Awareness in 4 Steps*) (*Աշխատողին առողջութեան եւ ապահովութեան տեղեակ ըլլալը չորս քայլերով*) գրքոյկին մէջ: Գրքոյկը ձեռնարկ է Ministry of Labour-ի ուէպ սայթին մէջ:- labour.gov.on.ca կամ findlink.at/hsawarenes: Կարող էք նաեւ զանգել ServiceOntario **1-800-267-8097** խնդրելու գրքոյկը ձեզի դրկելու:

- Աւելի գիտնալու համար թէ ինչպէս Ministry of Labour-ը կը պաշտպանէ բանուորները, այցելեցէք: labour.gov.on.ca կամ findlink.at/hsafety
- Գիտնալու ինչպէս զանգատիլ գործի ապահովութեան վերաբերեալ, զանգեցէք Health and Safety Contact Centre **1-877-202-0008**:

ՕՆԹԱՐԻՈՅԻ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱՀՈՎՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀԱՆՈՒՐԴԸ

Ontario Workplace Safety and Insurance Board (WSIB) Օնթարիոյի աշխատատեղի անվտանգութեան եւ ապահովագրութեան խորհուրդը կը կառուարէ Օնթարիոյի առանց-սխալի աշխատատեղի ապահովագրութիւնը գործատերներուն եւ իրենց գործատուներուն համար: Խորհուրդը կը ֆինանսատրուի գործատուի ներդրումներով: Ան կ'ապահովէ հաշմանդամութեան օգուտներ, կը վերահսկէ առողջապահական խնամակալութեան որակը որ աշխատողները կը ստանան եւ կ'օգնէ անոնց որոնք վիրաւորուած են գործի մէջ:

Եթէ աշխատանքի ատեն վիրաւորուած էք կամ կը ցանկանաք գիտնալ աւելի աշխատատեղի ապահովութեան եւ ապահովագրութեան մասին, զանգեցէք **1-800-387-0750** կամ այցելեցէք WSIB - wsib.on.ca





ՁԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՄԿՍԻԼ

Կան հետազոտողական հնարաւորութիւններ սկսելու ձեր սեփական գործը Օնթարիոյի մէջ: 2012-ին, աւելի քան 2.9 միլիոն մարդիկ աշխատանքի ընդունուեցան փոքր և միջակ ընկերութիւններու կողմէ Օնթարիոյի մէջ: Այս ընկերութիւնները Օնթարիոյի գործերու 98% տոկոսն են:⁶

Օնթարիոյի մէջ գործ մը սկսելու մասին գիտնալու համար, այցելեցէ՛ք: Ministry of Economic Development and Trade ontario.ca կամ findlink.at/business

Օնթարիոյի կառավարութիւնը մշակած է փոքր գործի ընկերութիւններու կեդրոններ, որոնք տարածուած են զաւառին մէջ: Այստեղ, կարող էք տեղեկութիւն և ծառայութիւններ ստանալ յաջող փոքր գործ մը սկսելու, տիրանալու եւ աշխատելու մասին: Աւելի գիտցէ՛ք զանգելով **1-800-567-2345** կամ այցելեցէ՛ք ontario.ca կամ findlink.at/sbec

Գանատայի կառավարութիւնը հիմնած է բազմաթիւ Գանատայի գործի ծառայութեան կեդրոններ որոնց միջոցաւ կարող էք ստանալ տեղեկութիւն եւ աջակցութիւն որոնք ձեզի կ'օգնեն սկսելու ձեր սեփական գործը: Յաւելեալ տեղեկութեան համար հեռաջայնեցէ՛ք **1-888-576-4444** կամ այցելեցէ՛ք canadabusiness.ca

⁶ Աղբիւր: Ministry of Economic Development, Employment and Infrastructure, ontariocanada.ca կամ findlink.at/onmedte

ՀԱՍՏԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատման ծրագրին փոխադրող տարբերակի մը համար, հաճեցէք այցելել settlement.org/o2o

ՊԱՏՐԱՍԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ

- ☐ Դիմել ձեր հասարակական ապահովագրութեան թուին (SIN):
- ☐ Գիտնալ եթէ ձեր աշխատանքը Օնթարիոյի մէջ կանոնակարգուած է:

- ☐ Ձեր ուսումնական երաշխաւորագրերը արժէքաւորել:
- ☐ Գտնել կամրջելու ծրագրերու տեղերը ձեր շրջանին մէջ, որոնք կախում ունին ձեր գործի նպատակներուն հետ:

1. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Աղբիւրներ

2. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Աղբիւրներ

3. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Աղբիւրներ

ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՈՒԼ

- ☐ Խօսեցէք հաստատման խորհրդատուի կամ գործի խորհրդատուի մը հետ, ձեր գործ փնտռելու պէտքերուն եւ յաջորդ քայլերուն մասին:
- ☐ Ստացէք հիմնական բացատրութիւն ձեր նախասիրած գործի աշխատատեղի մշակոյթին մասին Օնթարիոյի մէջ:
- ☐ Պատրաստել ամփոփագիր եւ դիմելու նամակ

- ☐ Սկսիլ կապ պահել արդիւնաւէտ ձեռով եւ մշակել տեղական կապերու ցուցակ մը:
- ☐ Գտէք կամաւորական պաշտօններ որոնք ձեռնտու են ձեր մասնագիտութեան ասպարէզին մէջ եւ որոնք կարող են ձեր գործի փորձառութիւնը զարգացնել:

1. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ՁԵՐ ՄԵՓԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՄԿՄԻԼ

- ☐ Կապ պահեցեք փոքր գործի ընկերություններու կեդրոնի մը հետ տեղեկություն ստանալու ձեր սեփական գործը սկսելու մասին:

1. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականություն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ԴՐԱՄ և ԱՆՁՆԱԿԱՆ ԵԼԵԻՄՈՒՏՔ

Այս մասը կը ներկայացնէ հիմնական դրամական նիւթեր: Պիտի գտնէք տեղեկութիւններ դրամատան մէջ հաշիւ բանալու, ապառիկ ստանալու եւ տուրքեր վճարելու նաեւ տեղեկութիւն հասարակական օգնութեան եւ օգուտներու մասին:

50

Դրամ և դրամատան գործ

51

Ապառիկ ստանալ

52

Տուրքեր

53

Օգուտներ և
հասարակական
օգնութիւն

54

Հաստատման ծրագիր



ԴՐԱՄ և ԴՐԱՄԱՏԱՆ ԳՈՐԾ

Օնթարիոյի բնակիչները սովորաբար կը պահեն իրենց դրամը դրամատուներու, ապառիկի միութիւններու (credit unions) կամ վստահութեան ընկերութիւններու (trust companies) մէջ: Այս ֆինանսական հիմնարկութիւնները ապահով և յարմար տեղեր են: Ֆինանսական հիմնարկութիւններու մեծ մասը անդամներ են Canadian Deposit Insurance Corporation-ի, այս կը նշանակէ թէ կառավարութիւնը կ'ապահովագրէ ձեր հաշուի մէջի դրամը, մինչեւ արաւելագոյնը \$100,000:

ԴՐԱՄ

Տեղեկութեան համար Գանատական դրամի մասին և օտար դրամը փոխելու Գանատականի, կարդացէք *Welcome to Canada*:

Երբեք մի որկէք դրամական գումար նամակով, այլ գործածեցէք (cheque) վճարագիր, (money order) դրամական փոխանցում (գնումած դրամատուներ) կամ (postal order) փոստային դրամական փոխանցում (գնումած փոստային գրասենեակէ): Դրամատուները եւ անձնական փոխանցումի (transfer) ծառայութիւնները կարող են ձեզի յատկացնել ուրիշ ընտրութիւններ դրամ որկելու համար:

findlink.at/Money-Finances

ԴՐԱՄԱՏԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Կարող էք բանալ դրամատան հաշիւ մը, նոյնիսկ եթէ գործ չ'ունիք կամ եթէ դրամ չ'ունիք անմիջապէս դնելու հաշուին մէջ: Դրամատուներու մեծամասնութիւնը կը ներկայացնեն յետեւեալ ծառայութիւնները:-

- Վճարագրերու և խնայողական հաշիւներ (savings accounts)
- Հաշուեքարդեր (Debit card)
- 24-ժամ ինթըրնէթի և հեռախօսային դրամատան գործեր
- Պարտքի դրամ (loans) և վճարաքարդեր (credit cards)
- Ներդրումի (Investment) արտադրանքներ և ծրագրեր
- Ֆինանսական խորհուրդ

Թէեւ Գանատական դրամատուները կը սեպուին շատ ապահով, պէտք է լաւ տեղեակ ըլլաք որպէսզի կարենաք ձեր դրամական շահերը պաշտպանել: Տեղեկութեան համար թէ ինչպէս կը պահպանէք դուք ձեզ եւ ձեր ելեմուտքը խարդախ գործունէութիւններէ, ինչպէս հաշուեքարդի խարդախութիւն, կարդացէք Industry Canada-ի *Consumer Handbook*-ը առցիծ այցելելով consumerhandbook.ca

findlink.at/Money-Finances

ՀԱՇՈՒ ԲԱՆԱԼ

Լաւ միտք է ուսումնասիրել մի քանի ֆինանսական հիմնարկութիւններ հաշիւ բանալէ առաջ: Վճարները դրամատան արտադրանքներու եւ ծառայութիւններու ինչպէս նաեւ տոկոսի գինները կարող են տարբերիլ: Հարցուցէք առանց վճարի դրամատան հաշիւներու մասին, որոնք հանրաժանօթ եղած են: Նաեւ հարցուցէք նոր եկողներու համար յատկացուած ծառայութիւններու մասին:

Դրամավճարի հաշիւի կարիք պիտի ունենաք եթէ ձեր գործատուն կը վճարէ վճարացուցակի պահեստի դրամով (payroll deposit): Խնայողական եւ ներդրումի հաշիւները օգտակար են դրամ խնայելու համար, որովհետեւ անոնք աւելի բարձր տոկոսներ ունին քան դրամավճարի հաշիւները: Ամենայն դէպս դուք իրաւունք պիտի ունենաք ընելու միայն որոշ ձեւերով կամ սահմանափակ թիւով գործարքներու (transactions): Սպառողներու մեծ մասը որոնք կը բանան խնայողական հաշիւներ նաեւ ունին դրամավճարի հաշիւներ ամենօրեայ դրամատան գործի համար:

Հաշիւ բանալու համար դրամատան, ապառիկ միութեան կամ վստահութեան ընկերութեան մէջ, կարիք պիտի ունենաք երկու նոյնացումի փաստաթուղթերու, ինչպէս անցագիր և հասարակական ապահովագրութեան թիւ (SIN) քարդ: Սովորաբար, մէկ փաստաթուղթը պէտք է որ ունենայ ձեր լուսանկարը:

Երբ բանաք դրամատան հաշիւ պիտի ստանաք դրամատան քարդ (նաեւ կը կոչուի հաշուեքարդ *debit card*): Կարող էք օգտագործել այս քարդը դրամի փոխարէն խանութներու, ճաշարաններու և ուրիշ գործերու մէջ: Նաեւ այս քարդը ձեզի թոյլ կու տայ կատարելու գործարքներ դրամատանային մեքենաներով (կը կոչուին *Automated Teller Machines* կամ *ATMs*):

findlink.at/Money-Finances

Մտածելու կէտեր

Ո՞ր դրամատուները ունին յատուկ ծառայութիւններ նոր եկողներու համար:

Ես կարիք ունի՞մ խնայողական հաշիւի և վճարագրի հաշիւի:

Եթէ ես ունիմ դրամատուներ մը հաշուեքարդ եւ կը գործածեմ ուրիշ դրամատուների մը մեքենան (ATM), ի՞նչ է ծառայութեան ծախսը:

ԱՊԱՌԻԿ ՄՏԱՆԱԼ

ԱՊԱՌԻԿ

Ապառիկ կը նշանակէ պարտքի դրամ առնել: Վճարաքարդերը եւ դրամատունէն տոկոսով պարտքի դրամ առնելը ամենաընդհանրացած ձեւերն են ապառիկի: Դրամ փոխ առնողները սովորաբար կը վերադարձնեն իրենց պարտքերը կանոնաւոր մասնավճարներով: Գումարը և վճարումներու ժամանակամիջոցները պէտք է յստակ ըլլան այն ատեն որ ապառիկը կամ պարտքի դրամը կը տրուի:

Երբ կը ստանաք դրամատունէ պարտքի դրամ կամ կը գործածէք վճարաքարդ, կը վճարէք **տոկոս**: Տոկոսը այն դրամն է որ փոխ տուողը (սովորաբար դրամատունը) կը պահանջէ փոխ առնողէն: **Տոկոսին գինը** կը նշանակէ ամբողջ փոխ առնուած գումարին հարիւրային տոկոսը, որ կը վերադարձնէք փոխ առնուած դրամին վրայ գումարելով ժամանակամիջոցի մը ընթացքին: Կարգ մը պարտքի դրամներ եւ վճարաքարդեր ունին շատ բարձր տոկոսներ: Անոր համար, երբ դրամ փոխ կ'առնէք դրամատունէ մը, պարտքի դրամի կամ վճարաքարդի ձեռով, պէտք է հարցնէք ինչ է ձեր տոկոսին գինը:

Կարդացէք *Welcome to Canada* անլի գիտնալու ապառիկի եւ պարտքի դրամ առնելու տարբեր ձեւերու մասին և ինչպէս ընտրել եւ դիմել վճարաքարդի:

 findlink.at/Money-Finances

ՎԱՐԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԶԱՐԳԱՑՆԵԼ

Երբ պարտքի դրամ կ'առնէք կամ կը գործածէք վճարաքարդ մը, զեկուցող գործակալութիւն մը կը հաւաքէ տեղեկութիւն եթէ դուք ձեր վճարումները ժամանակին կ'ընէք եւ որքան ժամանակէ ետք կը վերադարձնէք այն դրամը որ փոխ առած էք: Այս տեղեկութիւնը կը սեպուի ձեր *վարկի պատմութենէն* մաս մը:

Կարեւոր է *վարկի պատմութիւն* մը հիմնել Օնթարիոյի մէջ: Եթէ կը փափաքիք դիմել վճարաքարդի, պարտքի դրամի կամ կալուածի գրաւի (mortgage), ձեր ֆինանսական հիմնարկութիւնը պիտի քննարկէ ձեր վարկային պատմութիւնը, տեսնելու համար թէ որքան լաւ ձեռով կառաւարած էք ձեր անցեալի եղանակները: Հիմնուելով ձեր վարկի պատմութեան վրայ, ձեր ֆինանսական հիմնարկութիւնը պիտի որոշէ ձեր ցանկացած ապառիկը տալու մասին:

Շատ մարդիկ կը սկսին իրենց վարկի պատմութիւնը հիմնել վճարաքարդերով: Դիմեցէք ներկայացուցիչի մը ձեր ֆինանսական հիմնարկութեան մէջ գիտնալու համար նոր եկողներու վճարաքարդի ծրագիրներու մասին: Պայմանագիր մը ստորագրելէ առաջ, ուսումնասիրեցէք բոլոր պայմանները:

Financial Consumer Agency of Canada ունի գործածական խորհուրդներ եւ տեղեկութիւններ ապառիկի մասին, այցելեցէք:- fcac-acfc.gc.ca




Մտածելու կէտեր

Ի՞նչ է իմ վճարաքարդիս տոկոսին գինը:

Ինչպէ՞ս կրեմ գիտնալ իմ այժմու ապառիկի գնահատումը (credit rating):

Ի՞նչ կրեմ ընել իմ վարկիս պատմութիւնը զարգացնելու համար:



ՏՈՒՐՔԵՐ

Գանատայի մեջ, տուրքերը կը հաւաքուին երեք կառավարութիւններու կողմէ: ֆետերալ, գաւառական և քաղաքային: Տուրքերը կ'օժանդակեն կառավարութեան կողմէ ֆինանսաւորուած ծրագիրներու, ինչպէս ուսում, առողջապահութիւն, փոխադրումի ենթակառոց եւ հմտութիւններու ուսուցում:

Մտածելու կէտեր

Ու՞ր կարող եմ հարցնել իմ տուրքերու մասին:

Ո՞ր տեղէն կրնամ ստանալ օգնութիւն լեցնելու իմ եկամուտի տուրքիս հաշուեթուղթը:

Իրաւունք ունի՞մ Գանատայի մանուկի տուրքի թոշակին:

ՏՈՒՐՔԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Հաւաքուած տուրքերու ամենաշատ սովորական տեսակներն են, եկամուտի տուրքը, ծախսելու տուրքը, սեփականութեան տուրքը և գործի տուրքը:

Վստահ եղէ՞ք որ տեղեկ էք տուրքի վերաբերեալ ստացագիրներու և տարբեր փաստաթուղթերու մասին որոնք պէտք է հաւաքէք ամբողջ տարուայ ընթացքին:

Տուրքերու տարբեր տեսակներուն մասին տեղեկութեան համար, այցելեցէ՛ք Ministry of Finance ontario.ca կամ findlink.at/finance

ԵԿԱՄՈՒՏԻ ՏՈՒՐՔ

Գանատացիները կը կը ներկայացնեն իրենց եկամուտի տուրքի հաշուեթուղթը ամեն տարի ապրիլի 30-ին: Պէտք է տեղեկացնել բոլոր ձեր եկամուտներու մասին, բոլոր աղբիւրներէն, նոյնիսկ եթէ Գանատայէն դուրս են:

Կարող էք անվճար օգնութիւն ստանալ լեցնելու ձեր եկամուտի տուրքի հաշուեթուղթը Community Volunteer Income Tax Program-ի միջոցաւ: Այցելեցէ՛ք Canada Revenue Agency (CRA) - cra-arc.gc.ca կամ findlink.at/incometax

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԱԾ ԾԱԽԵԼՈՒ ՏՈՒՐՔ

Բոլոր Օնթարիոյի բնակիչները կը վճարեն համապատասխանուած ծախսելու տուրք Harmonized Sales Tax (HST) սպառողի ապրանքներու մեծամասնութեան համար: Քիչ եկամուտով մարդոց, Canadian Revenue Agency (CRA) կը վերադառննէ ամբողջը կամ մաս մը այս տուրքէն տուրքի վարկի միջոցաւ: Կարող էք դիմել այս վարկին լեցնելով HST Credit Application-ը ձեր տուրքի հաշուեթուղթին առաջին էջին վրայ: Եթէ CRA-ը որոշէ թէ իրաւունք ունիք, պիտի ստանաք վճարագիր:

Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէ՛ք cra-arc.gc.ca կամ findlink.at/gst-hst

ԳԱՆԱՏԱՅԻ ՄԱՆՈՒԿԻ ՏՈՒՐՔԻ ԹՈՇԱԿ

Եթէ ունիք մանուկներ, 18 տարեկանէն վար, կրնաք ստանալ Canada Child Tax Benefit: Եթէ իրաւունք ունիք, պիտի ստանաք ամսավճար Գանատական կառավարութենէն որ կ'օգնէ ձեր մանուկները մեծցնելու ծախսին: Վճարումի գումարը կախեալ է ձեր եկամուտէն եւ ձեզի ենթակայ մանուկներու թիւէն:

Գիտնալու եթէ իրաւունք ունիք և դիմելու համար, այցելեցէ՛ք Canada Revenue Agency:- cra-arc.gc.ca կամ findlink.at/cra-bnfts

ՕԳՈՒՏՆԵՐ և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Օնթարիոյի մէջ, գաւառական եւ ֆետերալ ծրագիրները ձեռնտու են
օգնելու անոնց որոնք դրամական կարիք ունին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ (EI)

Կարող էք իրաւունք ունենալ աշխատանքի
ապահովագրութեան Employment Insurance (EI)
օգուտներ ստանալու, եթէ աշխատանքէ դուրս
դուրեցաք ձեր կամքէ արկախ պայմաններու
պատճառաւ - օրինակ աշխատանքի
պակասութիւն կամ գործաւորներու
սեզոնային կամ բազմութեան կրճատումներ:
Իրաւունք ունենալու համար, պէտք է
հաւաքած ըլլաք բաւարար աշխատանքի
ապահովագրելի ժամեր Գանատայի մէջ,
նախորդ 52 շաբաթներու ընթացքին:

Աւելի գիտնալու EI օգուտներու դիմելու մասին,
խօսեցէք ձեր հաստատման խորհրդատուին
հետ, կամ այցելեցէք Service Canada at
servicecanada.gc.ca կամ findlink.at/ei-app

ԳԱՆԱՏԱՅԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԾՐԱԳԻՐ (CPP)

Երբ Օնթարիոյի մէջ կ'աշխատիք, ձեր
գործատուն ինքնաբերաբար կը պակսեցնէ
դրամ ձեր աշխատավարձի վճարագրերէն,
օժանդակելու (Canada Pension Plan) CPP-ին
ձեր փոխարէն:

Դուք կը որակաւորուիք CPP-ի ծերութեան
կենսաթոշակ ստանալու եթէ-

- Գանատայի մէջ աշխատած էք եւ
առնուազն մէկ օժանդակութիւն ըրած
էք (վճարում) CPP-ին:
- Առնուազն 65 տարեկան էք, կամ 60 - 64
տարեկան էք եւ կը համապատասխանէք
վաստակման եւ օժանդակութեան
պահանջներուն, որ նշուած են օրէնքին մէջ:

Աւելի գիտնալու CPP-ին մասին, այցելեցէք
Service Canada at servicecanada.gc.ca կամ
findlink.at/cpp

ԾԵՐՈՒԹԵԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ (OAS)

(Old Age Security Pension) OAS-ը վճարուած
ամսաթոշակն է Գանատացիներուն որոնց
տարիքը 65 կամ ավելի է: Իրաւունք ունենալու
համար, պէտք է առնուազն 10 տարի Գանատայի
մէջ ապրած ըլլաք 18 տարեկանէն ետք:

Աւելի գիտնալու, այցելեցէք Service Canada
servicecanada.gc.ca կամ findlink.at/oldagesecu

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ


Ontario Works-ը ծրագիր մըն է որ կ'օգնէ
Օնթարեացիներուն, որոնք ժամանակաւոր
ֆինանսական կարիքի մէջ են: Ան կ'ապահովէ
երկու ծառայութիւններ:- ֆինանսական
օգնութիւն եւ օգնութիւն գործ գտնելու:

Եթէ իրաւունք ունիք, Ontario Works կարող է
ձեզի օգնել ծածկելու ձեր հիմնական պէտքերու
ծախսերը, ինչպէս սնունդ և բնակարան:
Աւելի գիտնալու այս ծրագրին եւ իրաւունք
ունենալու պահանջներուն մասին, այցելեցէք
Ministry of Community and Social Services:-
mcss.gov.on.ca կամ findlink.at/socialassi

ՕՆԹԱՐԻՈՅԻ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹԵԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ (ODSP)

(Ontario Disability Support Program) ODSP-ն
կ'օգնէ անկարողներուն որոնք ֆինանսական
կարիք ունին: Ծրագիրը կ'օգնէ իրաւունք
ունեցող դիմողներուն գտնելու գործեր եւ
կ'ապահովէ իրենց ֆինանսական օգնութիւն
սնունդի եւ բնակարանի ծախսերուն համար:

Աւելի գիտնալու ODSP-ի մասին, այցելեցէք
Ministry of Community and Social Services
mcss.gov.on.ca կամ findlink.at/ont-dsp



ՀԱՍՏԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատման ծրագրին փոխազդող տարբերակի մը համար, հաճեցեք այցելել settlement.org/o2o

ԴՐԱՄԱՏԱՆ ԳՈՐԾԵՐ, ԱՊԱՌԻԿ ՍՏԱՆԱԼ ԵՒ ՏՈՒՐՋԵՐ

- ☐ Հետազոտել դրամատան ընտրություններու մասին եւ բանալ դրամատան հաշիւ:
- ☐ Խօսիլ իմ դրամատան ներկայացուցիչիս հետ նոր եկողներու դրամատան ծառայություններու մասին:

- ☐ Դիմել վճարաքարդի:
- ☐ Դիմել Գանատայի մանուկի տուրքի թոշակի - Canada Child Tax Benefit - (եթե իրաւունք ունիմ):

1. Պարտականություն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականություն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականություն

Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ՄԱՐԴԻԿ և ՇՐՋԱՊԱՏ

Այս մասը կը ներկայացնէ տեղեկութիւն օգնելու ձեզ հասկնալու Օնթարիոյի տեսակաւոր հասարակութեան կարեւոր արժէքները, ներառեալ սեռային հաւասարութիւն, յարգել եւ արժէք տալ բոլորին հաւասար չափով, ընտանեկան խնդիրներ լուծել ոչ-խիստ ձեւերով և խնայել շրջապատը:

56

Բովանդակութիւն

57

Անկարող մարդիկ

58

Ընտանեկան յարաբերութիւններ

59

Խնայել շրջապատը

60

Հաստատման ծրագիր





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օնթարիո տեսակաւոր հասարակութիւն մըն է որտեղ մարդիկ կը ձգտին իրարու հետ համագործակցելու, իրարմէ սորվելու եւ ստեղծելու բաց մշակոյթ մը: Շատ հնարաւորութիւններ պիտի ունենաք մարդոց ծանօթանալու որոնք ձեզմէ տարբեր են: Օնթարիոն կը ձգտի ըլլալ մատչելի եւ բովանդակող - որտեղ ամէն մարդ ինքզինքը իր տան մէջ կը զգայ:

Մտածելու կէտեր

Ի՞նչ են իմ դաստիարակչական սովորութիւններս եւ համոզմունքներս:

Ինչա՞նի կը հանդուրժեմ տարբեր հեռանկարներով մարդոց:

Ի՞նչ գիտեմ ուրիշ մշակոյթներու մասին:

Ինչպե՞ս կարող եմ աւելի գիտնալ ուրիշ մշակոյթներու մասին:

Ի՞նչ ընդհանրացումներ կ'ընեն մարդիկ իմ մշակոյթիս մասին:

ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹԻՒՆ և ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օնթարիոյի բնակչութիւնը կը ներառէ մարդիկ շատ տարբեր մշակութային եւ կրօնական ծագումներէ, շատ տարբեր կարողութիւններով, տարբեր սեռային կողմնորոշումներով եւ ամէն տեսակի տարբերութիւններով:

Օգտուելու այս հիմնալի մարդոց խառնուրդէն, պէտք է ըլլանք բովանդակող: Բովանդակութիւնը կը նշանակէ աշխոյժ ձեռով յարաբերութիւն ունենալ բոլոր ծագումներէ մարդոց հետ: Այն նաեւ կը նշանակէ վստահ ըլլալ թէ ամէն անձ ունի հաւասար առիթներ մասնակցելու Օնթարիոյի կեանքի բոլոր ասպարեզներուն մէջ:

Ministry of Government Services ծրագրած է վերածելու Ontario Public Service (OPS)-ը աւելի բովանդակող աշխատատեղի մը: Յաւելեալ տեղեկութիւններու համար, այցելեցէ՝ mgs.gov.on.ca կամ findlink.at/omgs

Օնթարիոյի *մարդու իրաւունքներու* օրինագիրը (Ontario Human Rights Code) կը ներկայացնէ մարդոց բովանդակելու հիմք մը, որով մարդոց հետ անիրաւացիօրէն վարուիլը օրէնքի դէմ կը նկատուի: Յաւելեալ տեղեկութեան համար, այցելեցէ Ontario Human Rights Commission: - www.ohrc.on.ca

ՏՂԱՄԱՐՈՑ և ԿԻՆԵՐՈՒ ՀԱԽԱՍԱՐՈՒԹԻՒՆ

Գանատայի մէջ, տղամարդոց եւ կիներու միջեւ հաւասարութիւնը հիմնական արժէք մըն է: Դաստիարակչական սովորութիւնները որ կ'արժէքազրկեն կամ կը վիրաւորեն կիները կամ աղջիկները հանդուրժելի չեն:

LGBTQ ՀԱՄԱԿԵՑՈՒԹԻՒՆԸ

LGBTQ կրճատումն է *Lesbian, Gay, Bi-sexual, Transgendered, Queer* - միասեռային եւ երկ-սեռային մարդոց: LGBTQ մարդիկը հպարտ մասնակիցներ են Օնթարիոյի հասարակութեան մէջ: Զատողութիւն ընելը կամ տանջելը մարդոց իրենց սեռային կողմնորոշումին պատճառաւ ապօրինի է Օնթարիոյի *մարդու իրաւունքներու օրինագրի* տակ:

Գիտցէք LGBTQ մարդոց ծրագիրներու եւ ծառայութիւններու մասին: - settlement.org կամ findlink.at/lgbtqservi, կարող էք նաեւ հեռաձայնել 211 կամ այցելել serviceontario.ca

ԱՆԿԱՐՈՂ ՄԱՐԴԻԿ

Օնթարիոյի մէջ 7 մարդէ մէկը ունի անկարողութիւն – մօտաւորապէս 1.85 միլիոն Օնթարիացիներ:⁷ Ժամանակի ընթացքին, այս թիւը պիտի շատնայ: Օնթարիո կ'ուզէ ըլլալ տեղ մը ուր ամէն մարդ կարող է մասնակցիլ համայնքին մէջ: Օնթարիոյի գործերը, կազմակերպութիւնները եւ համայնքները կ'աշխատին անկարող մարդոց աւելի մատչելի եւ բովանդակող դառնալ:

ՀԱՇՎԱՆԱՍՏՈՒԹԻՒՆ

Անկարողութիւն կը ներառէ շատ տարբեր տեսակներ եւ պայմաններ: Կարգ մը անկարողութիւններ տեսանելի են ուրիշ մարդոց, եւ կարգ մը ոչ՝: Անձ մը կարող է հաշմանդամ ծնիլ եւ կամ ունենալ անկարողութիւն արկածի կամ հիւանդութեան պատճառաւ: Մարդիկ կարող են ունենալ ֆիզիքական, մտային կամ սորվելու անկարողութիւններ: լսելու կամ տեսնելու անկարողութիւններ: լուսնոտութիւն: հոգեկան առողջութեան անկարողութիւններ եւ մոլութիւններ: մթնոլորտային զգայնութիւններ եւ ուրիշ վիճակներ:

Գիտցէք անկարող մարդոց անձնական փորձառութիւններուն մասին բնաստեղծութիւններու, յօդուածներու եւ շարժանկարներու մէջ - Ontario Human Rights Commission: ohrc.on.ca կամ findlink.at/ohr-ldr

Կարդացէք անկարող մարդոց իրաւունքներուն մասին Օնթարիոյի մարդու իրաւունքներու օրինագրին տակ ohrc.on.ca կամ findlink.at/accessibact

ՄԱՏՉԵԼԻՈՒԹԵԱՆ ԶԱՓԱՆԻՉԵՐ

Օնթարիոյի 2005 տարուայ «**Անկարող Օնթարիացիներու մատչելիութեան օրէնքը** Accessibility for Ontarians with Disabilities Act (AODA)» կոչ ուղղեց ստեղծելու մատչելիութեան չափանիշեր: Այս չափանիշերը կը բացատրեն այն ինչ որ բոլոր գործերը եւ կազմակերպութիւնները պէտք է ընեն որպէսզի վստահ ըլլան թէ անկարող մարդիկը կարող են լրիւ մասնակցիլ Օնթարիոյի հասարակութեան մէջ: Նպատակն է ստեղծել մատչելի Օնթարիո մը մինչեւ 2025 տարին:

Կան հինգ մատչելիութեան չափանիշեր:-

1. Յաճախորդի ծառայութիւն - Ամէն կազմակերպութիւնները որոնք կը ներկայացնեն ապրանք եւ ծառայութիւններ պէտք է ունենան գրուած ծրագիր մը որ ցոյց կու տայ ինչպէս անոնք պիտի ապահովեն յաճախորդի ծառայութիւն անկարող մարդոց: Ծրագիրը կարող է ներառել կէտեր, ինչպէս, թոյլ տալ ծառայող կենդանիներու եւ հաշմանդամ սայլակներու, ջերմօրէն

ընդունիլ օգնող անձերը եւ հաղորդակցիլ արդիւնաւետ ձեւով:

2. Աշխատանք - Բոլոր կազմակերպութիւնները պէտք է մատչելի ընեն անկարող մարդոց կարելորդ մաս մը, իրենց աշխատողները գտնելու, աշխատցնելու եւ աջակցելու ատեն: Այս կարող է ներառել, օրինակ, իրենց ապահովել յատուկ գործիքներ կամ աշխատանքային պայմաններ:
3. Տեղեկութիւն եւ հաղորդակցութիւն - Կազմակերպութիւնները պէտք է իրենց բոլոր տեղեկութիւնները մատչելի ընեն, ինչպէս գրքոյկներ, ուէպ սայթեր եւ ուսումնական նիւթեր:
4. Փոխադրում - Այս չափանիշը կը վերաբերի հանրակառքերու, թաքսիներու, անկարող մարդոց յատուկ փոխադրութեան միջոցներու, հիւանդանոցներու միջեւ դարձող հանրակառքերու, ղարդի հանրակառքերու եւ կարգ մը լաստանաւերու: Պահանջները կը ներառեն ապահովել բարձրացնելու գործիքներ, աստիճաններ, բռնուելու ծառայող կտորներ, լուսատրութիւն, նշաններ եւ ուրիշ բաներ:
5. Հանրային տարածքներ - Այս չափանիշը կը վերաբերի շէնքերու եւ հանրային տարածքներու, ինչպէս խաղավայրեր, ինքնաշարժ շարելու տեղեր եւ պտոյտի տարածքներ:

Գիտցէք Անկարող Օնթարիացիներու մատչելիութեան օրէնքին մասին, 2005, ontario.ca կամ findlink.at/accessibact

Գիտցէք մատչելիութեան չափանիշերու մասին - ontario.ca կամ findlink.at/accsstandr

Անկարող մարդոց ծրագիրներու եւ ծառայութիւններու տեղեկութեան համար, հեռաձայնեցէք **211** կամ այցելեցէք Disability Doorway:- disabilitydoorway.com


Ontario Disability Support Program-ը կ'օգնէ անկարող մարդոց որոնք դրամական կարիք ունին: Աւելի գիտնալու mcss.gov.on.ca կամ findlink.at/ont-dsp

⁷ Աղբիւր: mcss.gov.on.ca կամ findlink.at/ont-dsp

Մտածելու կէտեր

Ինչա՞նի մատչելի է իմ աշխատատեղս:

Ի՞նչ անտեսանելի անկարողութիւններ կարելի է որ ունենան իմ շուրջի մարդիկը:





ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընտանիքը կարող է կարեւոր աջակից ըլլալ երբ կը հաստատուիք Օնթարիոյի մէջ: Ֆետերալ եւ գաւառական օրէնքները կը պաշտպանեն բոլոր ընտանիքի անդամները:

ԱՍՏՈՒՄԱԼՈՒԹԻՒՆ

Ամուսնութիւնը ընտանեկան կեանքի հիմքն է Գանատայի և Օնթարիոյի մէջ շատ մարդոց համար: Կարող էք նոյն ժամանակ միայն մէկ անձի հետ ամուսնացած ըլլալ: Եթէ ուրիշ երկրի մէջ ամուսնացած էք, պէտք է ամուսնալուծուիք նախքան ամուսնանալ կարենալը Օնթարիոյի մէջ: Նոյն սեռի ամուսնութիւնը օրինաւոր եղած է Օնթարիոյի մէջ 2003-էն ի վեր: Եթէ կ'ապրիք ընկերոջ/ընկերուհիի հետ, բայց ամուսնացած չէք, կը սեպուիք «ընդհանրացած-օրէնքի ընկերներ» եթէ յարաբերութեան մէջ եղած էք աւելի քան երեք տարի, կամ մէկ տարի եթէ մանուկ ունիք միասին:

 findlink.at/Rights-Freedoms

ԱՍՏՈՒՄԱԼՈՒԾՈՒՄ

Միայն դատարան մը կարող է ձեզ ամուսնալուծել: Ամուսինը կամ կինը կարող են դիմել ամուսնալուծման: Պէտք է ապացոյց տալ թէ ձեր ամուսնութիւնը վերջացած է: Եթէ ձեր ամուսինը կամ կինը ստանայ ամուսնալուծում ուրիշ երկրի մէջ, այդ սովորաբար օրինաւոր կը համարուի Օնթարիոյի մէջ եթէ ձեր ամուսինը կամ կինը Գանատայէն դուրս եղած է ամենաքիչը մէկ տարի:

 findlink.at/Rights-Freedoms

ԱՍՏՈՒՄԱԿԱՆ ԶԱՐԱՇԱՀՈՒՄ

Ֆիզիքական բռնութիւնը, բոլոր ձևերով, ամուսիններու, ընդհանրացած-օրէնքի ընկեր կամ ընկերուհիի կամ որեւէ ուրիշ ընտանիքի անդամի հանդերձ ապօրինի է: Այս կը ներառէ անցանկալի սեռային յարաբերութիւնը: Մէկուն վիրաւորել կամ սպաննել սպառնալը նաեւ ռճիր է: Անձ մը որ մեղաւոր կը սեպուի ընտանեկան բռնութեան, ընտանիքի անդամի մը հանդէպ, կը դատապարտուի ծանր պատիժներու, ներառեալ բանտարկութիւն:

 findlink.at/Rights-Freedoms

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԳԱՆԱՏԱՅԻ ԶԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ոստիկանութիւնը կ'օգնէ մարդոց համայնքին մէջ ապահով պահելով եւ վստահ կ'ըլլայ թէ իւրաքանչիւր անձ կը հետեւի Գանատայի օրէնքներուն: Կարող էք միշտ ռստիկանութեան օգնութիւնը խնդրել ամէն վիճակներու մէջ, ինչպէս տան մէջ

բռնութիւն, արկած, անձնական փաստ կամ յանցագործութիւն մը որ տեղի ունեցած է:

Եթէ վտանգի մէջ էք, զանգեցէ՛ք 911 եւ խնդրեցէ՛ք ռստիկանութիւնը: Անոնք իսկոյն պիտի հասնին ձեր տունը: Աւելի տեղեկութեան համար ռստիկանութեան դերին մասին Օնթարիոյի մէջ, կարդացէ՛ք *Welcome to Canada*.

 findlink.at/Rights-Freedoms

Կիները, որոնք չարաշահման վտանքի մէջ են ընտանիքի անդամի մը կողմէ, կարող են զանգել *Assaulted Women's Helpline* at 1-866-863-0511, 24 ժամ օրական, 7 օր շաբաթը: Այն կը ներկայացնէ հեռախօսային տագնապի խորհրդատուութիւն եւ ցուցմունքներ աջակցութեան եւ ծառայութիւններու ձեր համայնքին մէջ: Այցելեցէ՛ք awhl.org: Նաեւ այցելեցէ՛ք *Ministry of Community and Social Services* at mcsc.gov.on.ca կամ findlink.at/womenhelp

Նաեւ կարող էք ձեր շրջանին մէջ ծառայութիւններու մասին տեղեկութիւն ստանալ զանգելով 211, ինչպէս ընտանեկան խորհրդատուութիւն կամ ծնողական դասընթացքներ:

ՄԱՆՈՒԿ ԶԱՐԱՇԱՀՈՒՄ, ԿԱՍ ԱՆՏԵՍԵԼ

Մանուկ չարաշահելը որեւէ ձև մըն է ֆիզիքական, հոգեկան կամ սեռային վատ վերաբերմունքի կամ խնամքի պակասի, որ ֆիզիքական կամ հոգեկան փաստ կը հասցնէ մանուկին կամ երիտասարդին: Մանուկի-երիտասարդի չարաշահումի տեսակներն են հոգեկան, ֆիզիքական կամ սեռային չարաշահում, ընտանեկան բռնութիւն եւ անտեսել: Անտեսել կը նշանակէ չի կարենալ ապահովել ապաստարան, սնունդ, հագուստ, ուսում, լաւ առողջաբանութիւն, հսկողութիւն, առողջապահութիւն, բաւարար հանգիստ, բարոյական ցուցմունք, վարժութիւն, ապահով մթնոլորտ և մաքուր օդ:

Գիտցէ՛ք աւելի մանուկի չարաշահելու և անտեսելու մասին findlink.at/protectchild

Բոլոր չափահասները Օնթարիոյի մէջ պէտք է զեկուցեն կասկածելի մանուկի չարաշահելու վիճակ մը: Երբ մանուկի չարաշահումը կամ անտեսելը կասկածելի է, մանուկի պաշտպանութեան օրէնքները Օնթարիոյի մէջ կը թոյլատրեն մանուկի բարեկեցութեան պաշտօնէաններուն հետազննել այդ մանուկները իրենց ընտանիքէն:

Օնթարիոյի կանանց տնօրէնութիւն

Գտէ՛ք տեղեկութիւն կիներու համար որոնք զոհեր են ընտանեկան կամ սեռային բռնութեան www.women.gov.on.ca կամ findlink.at/serviwomen

Ջոնի ծառայութիւններ - Ministry of the Attorney General

Գտէ՛ք տեղեկութիւններ ընտանեկան և սեռային բռնութեան զոհերու մասին www.attorneygeneral.jus.gov.on.ca կամ findlink.at/ovs

Ընտանեկան օրէնքի ուսում կիներու համար

Բացատրութեան համար կանանց իրաւունքներու մասին Օնթարիոյի ընտանեկան օրէնքին տակ, այցելեցէ՛ք onefamilylaw.ca կամ www.women.gov.on.ca կամ findlink.at/flew

Ընտանեկան օրէնքի ուղեցոյց

Գիտնալու համար ձեր իրաւունքներու և պարտաւորութիւններու մասին Օնթարիոյի ընտանեկան օրէնքին տակ, այցելեցէ՛ք www.attorneygeneral.jus.gov.on.ca կամ findlink.at/on-famlaw

ՇՐՋԱՊԱՏԸ ՊԱՀՊԱՆԵԼ

**Շրջապատը պահպանելը Օնթարիոյի մէջ կարելու արժէք ունի:
Կարող էք ձեր դերը կատարել խուսափելով աղտոտել, մասնակցելով
վերամշակման ծրագիրներու եւ խնայելով ուժ:**

ՄԻ ԱՂՏՈՏԷՔ!

Աղտոտելը, երբ կը նետէք որեւէ մէկ տեսակի աղի ձամփան կամ գետինը, քաղաքին կամ գիւղին մէջ:

Քաղաքապետարաններու մեծ մասը Օնթարիոյի մէջ ունին օրէնքներ աղտոտելու դէմ: Աղտոտելու տուգանքները կը տատանին \$100 փնջէն \$1,000 կամ աւելի: Ոստիկանութիւնը պիտի կեցնէ ձեր ինքնաշարժը եթէ տեսնէ թէ կ'աղտոտէք մայրուղիի մը վրայ:

Օգնեցէք Օնթարիոյի շրջապատը մաքուր պահպանելու ձեր աղբը թափելով աղբարկղի մը մէջ կամ զայն ձեր հետ տուն տանելով:

ՏՆԱՅԻՆ ԱՂԸ ՎԵՐԱՄՇԱԿԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

Blue Box վերամշակման ծրագիրը ձեռնտու է Օնթարիոյի տուններու համար: Փոխանակ լեցնելու տարածքները աղբով, աղբը կը գործածուի շինելու նոր արտադրանքներ: Կարող էք դնել ապակիի, մետաղի, բլաստիքի եւ թուղթի աղբի տեսակները ձեր Blue Box-ին մէջ, որպէսզի տեղական առողջապահութեան գործաւորները վերցնեն զանոնք:

Կարգ մը քաղաքապետարաններ նաեւ ունին Green Bin ծրագիր, որ կը թոյլատրէ ձեզի վերամշակելու որգանական աղբը, ինչպէս պտուղի, բանջարեղէնի, մսեղէնի, ձուկի եւ սուրճի: Որգանական աղբը կը վերածուի պարարտախառնուրդի որը կը գործածուի լաւացնելու զբօսայգիներու եւ գիւղատնտեսական տարածքներու հողը:

Ստանալու Blue Box, կամ գիտնալու եթէ ձեր շրջանը ունի Green Bin-ի ծրագիր, կապ պահեցէք ձեր տեղական քաղաքապետարանին հետ: Նայեցէք ձեր հեռաձայնի (Blue Pages) կապոյտ էջերուն մէջ, կամ այցելեցէք Օնթարիոյի (Ministry of Municipal Affairs and Housing) ստանալու քաղաքապետարաններու ցուցակ մը, եւ իրենց հետ կապ պահելու տեղեկութիւնները, այցելեցէք www.mah.gov.on.ca կամ findlink.at/muniseroff

ԷԼԵԲՐՈՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՒ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻ ԾՐԱԳԻՐ


Էլեքտրոնային աղբերը, նաեւ կը կոչուին e-waste, կը ներառեն առարկաներ, ինչպէս լուսանկարի մեքենաներ, համակարգիչներ, հեռաձայններ եւ հեռատեսիլներ: Անոնք

լեցուած են թունաւոր եւ արժէքաւոր նիւթերով եւ պէտք չէ դրուին աղբի տարածքներու մէջ: Երբ կը գնէք էլեքտրոնային արտադրանքներ Օնթարիոյի մէջ, կը վճարէք մթնոլորտի ապահովութեան վճար: Հաւագուած դրամը կը գործածուի էլեքտրոնային արտադրանքներու վերամշակումի կամ վերաշինութեան ծախսը վճարելու:

Այցելեցէք recyclemyelectronics.ca գտնելու էլեքտրոնային գործիքներու վերամշակման համար պահեստի տեղ ձեր շրջանին մէջ:

ՌԻՇ ԽՆԱՅԵԼ

Էլեկտրականութիւն կամ կազ արտադրելը ունի փասակար հետեւանքներ շրջապատին: Ինչպիսիք քիչ օգտագործենք աւելի լաւ է: Գիտցէք ինչպէս ձեր տան մէջ ուժ խնայել այցելելով (Ministry of Energy): energy.gov.on.ca կամ findlink.at/savinenerg: Նաեւ այցելեցէք Natural Resources Canada-ի Office of Energy Efficiency - oee.nrcan.gc.ca



Մտածելու կէտեր

Որտե՞ղ կարող եմ Blue Box գտնել եւ ի՞նչ կարող եմ դնել մէջը:

Իմ քաղաքապետարանը ունի՞ Green Bin ծրագիր:

Որտե՞ղ կարող եմ իմ չ'ուգած էլեկտրոնային գործիքները տանիլ:

Ի՞նչ կարող եմ ընել իմ տունս ուժի վերաբերեալ աւելի արդիւնաւէտ դարձնելու:



ՀԱՍՏԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատման ծրագրին փոխազդող տարբերակի մը համար, հաճեցեք այցելել settlement.org/o2o

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ☐ Հասկնալ իմ իրաւունքներս և պարտաւորութիւններս
Օնթարիոյի մարդու իրաւունքներու օրէնքին տակ:

ՇՐՋԱՊԱՏԸ ՊԱՀՊԱՆԵԼ

- | | |
|--|---|
| ☐ Իմ քաղաքապետարանէս ստանալ Blue Box
(կամ վերամշակման պարկ): | ☐ Գտնել գործածուած էլեկտրոնային գործիքներու
տեղական աղբ թափելու տեղը: |
| ☐ Գիտնալ եթէ իմ քաղաքապետարանս ունի
Green Bin ծրագիր: | ☐ Հետազօտել իմ տանս համար ուժի վերաբերեալ
արդիւնաւէտ ընտրութիւններ: |

1. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

2. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

3. Պարտականութիւն Երբ աւարտել / /

Տեղեկութեան աղբիւրներ

ՅԱԻԵԼՈՒԱԾ



62

Ֆեոդորալ կառավարության
աղբյուրներ

63

Օսթրիոյի կառավարության
նախարարութիւններ

64

Ներածական ցուցակ

ՖԵՏԵՐԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Գանատա եկեք

canada.ca կամ findlink.at/ctcextstay

Կուզե՞ք Գանատա գալ կամ ձեր կեցությունը երկարացնել: Այս միջոցը պիտի օգնե գիտնալու ձեր ընտրությունը իրաւունքը, լեցնելու եւ ներկայացնելու ձեր դիմումագիրը:

Ներգաղթողի ծառայություններ ձեր շրջանին մէջ

canada.ca կամ findlink.at/cic-serve

Ծառայությունները կարող են ներառել ապրելու տեղ գտնելու օգնություն, աշխատանք փնտռելու աջակցություն, լեզուական գնահատում եւ դասընթացներ, հարցաթերթեր լեցնելու օգնություն եւ համայնքի ծառայություններու մասին տեղեկություններ:

Գանատայի մէջ ապրելու միջոցը

canada.ca կամ findlink.at/cic-ictvac

Պատասխանեցէ՛ք քանի մը պարզ հարցումներու ձեր պէտք ունեցած Գանատայի մէջ հաստատուելու օգնութեան համար եւ գիտցէ՛ք Գանատայի մէջ ապրելու մասին:

Գանատայի մէջ աշխատիլը

canada.ca կամ findlink.at/workincana

(Working in Canada) Գանատայի կառավարութեան գործի եւ աշխատանքի շուկայի տեղեկութեան աղբիւրն է: Ան կը ներկայացնէ աշխատանքի անվճար տեղեկություններ:

Discover Canada: The Rights and Responsibilities of Citizenship

canada.ca կամ findlink.at/cic-study

(Discover Canada: *The Rights and*

Responsibilities of Citizenship - Ճանչցիր

Գանատան: - Քաղաքացիներու իրաւունքներ եւ պարտականություններ) կը գործածուի նոր եկողներու կողմէ սորվելու քաղաքացիութեան քննութեան համար:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՍՏԱՏՔԱՑԻՆ ՈՒԷՊ ՄԱՅԹԵՐ ՆՈՐ ԵԿՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Alberta

albertacanada.com/immigration

British Columbia

welcomebc.ca

Manitoba

immigratemanitoba.com

New Brunswick

welcomenb.ca

Newfoundland and Labrador

nlimmigration.ca

Northwest Territories

gov.nt.ca

Nova Scotia

novascotiaimmigration.com

Nunavut

gov.nu.ca

Ontario

ontarioimmigration.ca

Prince Edward Island

gov.pe.ca/immigration

Quebec

immigration-quebec.gouv.qc.ca

Saskatchewan

saskimmigrationcanada.ca

Yukon

immigration.gov.yk.ca

ՕՆԹԱՐԻՈՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Indigenous Affairs
ontario.ca/ministry-indigenous-affairs

Agriculture and Food
omafra.gov.on.ca

Attorney General
attorneygeneral.jus.gov.on.ca

Children and Youth Services
children.gov.on.ca

Citizenship, Immigration and International Trade
www.citizenship.gov.on.ca

Community and Social Services
mcss.gov.on.ca

Community Safety and Correctional Services
mcscs.jus.gov.on.ca

Consumer Services
sse.gov.on.ca/mcs/en/pages/default.aspx

Economic Development, Employment
and Infrastructure
ontario.ca/ministry-economic-development-trade-employment

Education
edu.gov.on.ca

Energy
energy.gov.on.ca

Environment
ene.gov.on.ca/environment

Finance
fin.gov.on.ca

Francophone Affairs
ofa.gov.on.ca

Government Services
mgs.gov.on.ca

Health and Long-Term Care
health.gov.on.ca

Infrastructure
moi.gov.on.ca

Intergovernmental Affairs
ontario.ca/ministry-intergovernmental-affairs

Labour
labour.gov.on.ca

Municipal Affairs and Housing
mah.gov.on.ca

Natural Resources
mnr.gov.on.ca

Northern Development and Mines
mndm.gov.on.ca

Research and Innovation
ontario.ca/ministry-research-innovation

Rural Affairs
omafra.gov.on.ca

Seniors' Secretariat
seniors.gov.on.ca

Tourism, Culture and Sport
mtc.gov.on.ca

Colleges and Universities
tcu.gov.on.ca

Transportation
mto.gov.on.ca

Women's Economic and Social Opportunity
women.gov.on.ca

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

Աշկերտություն	33	Լեզուի գնահատում	35
Դրամատան գործեր	50	Լեզուի ուսուցում	35
Հիմնական իրաւունքներ	24	LGBTQ	56
Օգուտներ և հասարակական օգնություն	53	Օրինական իրաւունքներ	24
Կամրջելու ծրագիրներ	41	Օրինական ծառայություններ	25
Իրաւունքներու և ազատություններու կանոնադրություն	24	Մտային առողջապահություն	16
Մանուկի խնամք	30	OHIP Քարդ	15
Կլիմայ	9	Անկարող մարդիկ	57
Սպառողի գիտակցություն	17	Հեռաձայնի եւ ինթըրնեթի ծառայություններ	17
Հաղորդակցութեան ծառայություններ	11	Փոստային ծառայություններ	17
Համայնքի կապակցություններ և կազդուրուիլ	21	Հանրային փոխադրում	22
Դրամական վարկ	51	Կազդուրուիլ	21
Հեծիք բշէլ	23	Վերամշակում	59
Ատաճաբոյժ	16	Ինքնաշարժ վարձել	22
Ընտանեկան բնություն	58	Վարձել	19
Ինքնաշարժ բշէլ	23	Հաստատման գործակալություններ	10
Վարորդի արտօնագիր	22	Հասարակական ապահովագրութեան թիւ	40
Տնտեսություն	8	Սկսիլ ձեր սեփական գործը	46
Ուսում:		Տուրքեր	52
Չափահասի ուսում շարունակել	34	Թաքսիներ	22
Տարրական դպրոց	31	Փոխադրում	22
Յետ-երկրորդական կրթություն	33	Կամաւորություն	21
Երկրորդական դպրոց	31	Գործ:	
Շտապ օգնութեան հեռաձայնի թիւեր	11	Գործ փնտռել	42
Աշխատանք (աշխատանք փնտռել)	42	Գործատեղի իրաւունքներ	44
Ուժի արդինաւէտություն	59		
Ընտանիքի բժիշկ	15		
Ընտանեկան օրէնք	58		
Ուտեստեղէն	17		
Աշխարհագրություն	6		
Կառավարություն	5		
Առողջապահություն	14		
Տօներ	44		
Բնակարան	18		
Մարդու իրաւունքներու օրինագիր	24		
Բովանդակություն	56		
Ծանօթացում Գանատայի	4		
Ծանօթացում Օնթարիոյի	6		
Աշխատանք փնտռել	42		
Աշխատանքի շուկայ	42		